№ 57 ՇԱԲԱԹ 15 ՄԱՐՏԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 15 ՄԱՐՏԻ № 57

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.

Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը—85 կ.: Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ ՄԱՅՐ

ԶԱՐՈՒՀԻ ՆԱԶԱՐԵԱՆԸ

հոգին աւանդեց հինգշաբթի լոյս ուրբաթ, ամսիս 14-ին, որի մասին յայտնվում է ազգականներին և բարեկամներին: Ամբիծքը ԱՅՍՕՐ, շաբաթ, երեկոյեան ժամը 7-ին: Յուղարկաւորութիւնը վաղը, ԿԻՐԱԿԻ, ամսիս 16-ին, առաւօտեան ժամը 11-ին տանից (Головинскій пр. 41) Վէրայի ս. Խաչ եկեղեցին, իսկ թաղումը նոյն Վէրայի հայոց գերեզմանատանը:

235. 2—1

ԹԱԳՈՒՀԻ ԲԷԿԼԱՐԵԱՆ և ԶԱՒԱՀԻՐ ԳԵԱՆՋԵՑԵԱՆ իրանց զաւակներով խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց սիրելի քրոջ՝

ԶԱՐՈՒՀԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկար և ծանր հիւանդութիւնից յետոյ ամսիս 14-ին, առաւօտեան: Ամբիծքը կը կատարվի այսօր, շաբաթ, ամսիս 15-ին, երեկոյեան 7 ժամին, իսկ յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի ամսիս 16-ին, առաւ. 11 ժամին, իր բնակարանից (Գօլօվինսկի պրօսպեկտ № 41) դէպի Վէրայի Սուրբ-Խաչ եկեղեցին: Թաղումը նոյն օրը պատարագից յետոյ, նոյն գերեզմանատանը:

237. 1—1

ՀԵՂԻՆԷ ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԸ, ՀՌԻՓՍԻՄԷ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԸ, ԳԱՅԻԱՆԷ ԵՒ ՄՆԱՑԱԿԱՆ ԽՈՒՆՈՒՆՑԸ խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց անմոռանալի մօրաքրոջ՝

ԶԱՐՈՒՀԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկար և ծանր հիւանդութիւնից յետոյ ամսիս 14-ին առաւօտեան: Ամբիծքը կը կատարվի այսօր, շաբաթ, ամսիս 15-ին, երեկ. ժամը 7-ին, իսկ յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, ամսիս 16 ին, առ. ժամը 11-ին իր բնակարանից (Գօլօվինսկի պր. № 41) դէպի Վէրայի ս. Խաչ եկեղեցին: Թաղումը նոյն օրը պատարագից յետոյ, նոյն գերեզմանատանը:

236. 1—1

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ

Հայկական Դրամատիկ Խմբակց. Վարչութիւնը

հրաւիրում է խմբակցութեան պ. պ. անդամներին

II ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որը կայանալու է շաբաթ մարտի 15-ին, երեկ. ժ. 8-ին խմբակցութեան փորձերի դահլիճում (Սօլօլակսկայա փողոց № 20)

Զբաղմունքի առարկաներն են՝

1) Վարչութեան զեկուցումն ներկայ տարվայ մինչև փետրվարի 15-ը եղած հաշիւների դրութեան մասին.
2) Գալիք սէզօնի նախահաշւի քննութիւն և վաւերացումն.
3) Կանոնադրութեան մի քանի յօդուածների փոփոխումն ու լրացումն.
4) Երկու փոխ-անդամների ընտրութիւն.
5) Ընթացիկ հարցեր.

Այս ժողովը լինելով երկրորդը՝ կայանալու է որքան անդամ էլ ներկայ լինի:

(ա.օ.) աո. 224. 2—2

ԿԻՐԱԿԻ, մարտի 16-ին, ցերեկվայ ժամը 12-ին **ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՈՒՄ**

կայանալու է

ԴՊՐՈՑԻ ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԸՆԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Օրակարգն է.

1) Հաշւետւութիւն վարչութեան գործունէութեան.
2) Հաստատութիւն նախահաշւի.
3) Ընտրութիւն վարչութեան մի փոխ-անդամի, վերստուգիչ յանձնաժողովի երկու փոխ-անդամի և ընկերութեան մի պատուաւոր անդամի (իշխ. Ալ. Ալ. Բէհբութեան):

աո. 1—1

Բերլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր. 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская 23, тел. 7—29.

(ա.օ.) աո. 977 100—98

ԲԺԻՇԿ

Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ

Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւններ:
Սրսկումն «606»-ի և «914»-ի:
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզաւետինսկայա փ. № 39. տ. Ջաղէթեանի:
Տէլէֆօն № 9—17.

(չ.ու.կ.) աո. 901. 100—53

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Թիւրքահայոց ազգային կենտրոնական վարչութիւնը, ինչպէս գիտեն մեր ընթերցողները, զրկւելով վերջերս ազգային ժողովի վստահութիւնից, ստիպւեց հրաժարական տալ: Ազգային ժողովն ընտրեց խորհրդարանական մի քննիչ մարմին, քննելու համար վարչութեան գործունէութիւնը, որ շատ երեսփոխանների կողմից ենթարկվեց ծանր քննադատութիւնների, մանաւանդ օսմանեան պարլամենտի հայ պատգամաւորների ընտրութեան հարցում բռնած իր ընթացքի համար:

Վարչութիւնը բաղկացած էր զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչներից, բայց տիրապետող դեր խաղում էին նրա մէջ դաշնակցականները, որոնց գործունէութիւնը, բնականաբար, չէր կարող օգտակար արդիւնք արտադրել ազգային շահերի պաշտպանութեան և գործերի կանոնաւոր ղեկավարութեան տեսակէտից այն պարզ պատճառով, որ դաշնակցականները ամեն տեղ իրանց կուսակցական շահերը գերադասում են ազգային ընդհանուր շահերից: Եթէ ուշադրութեամբ կարդանք Կ. Պօլսի հայ մամուլի օրգանների մեծ մասի արտայայտած կարծիքները, պէտք է գանք այն եզրակացութեան, որ տապալված վարչութեան նման ապիկար, անօգուտ և թոյլ վարչութիւն թիւրքահայերը չեն ունեցել մինչև այսօր:

Մեր ընթերցողները պէտք է իմանան, որ ազգային կենտրոնական վարչութիւնը իսկապէս կազմում են կրօնական և քաղաքական կոչված ժողովները, որոնք միանալով կազմում են խառն ժողով, և նոյն այդ խառն ժողովը, նախագահութեամբ պատրիարքի, կազմում է իսկական ազգային կենտրոնական վարչութիւնը, բաղկացած 29 անդամներից: Սակայն իրականութեան, պրակտիկայի մէջ, կամ նեղ մտքով, ազգային կենտրոնական վարչութիւնը կազմում է քաղաքական ժողովը, որ ունի իր ատենապետը կամ վարչապետը, ինչպէս ասում են թիւրքահայերը, և որ իրողապէս տնօրինում է ազգի աշխարհիկ գործերը: Ահա այդ վարչութեան դէմ էր բորբոքված զայրոյթն ազգային ժողովի, որ տապալեց նրա և ձեռնարկեց նոր վարչութեան ընտրութեան:

Փետրվարի 28-ին ազգային ժողովը նշանակել էր կրօնական և քաղաքական ժողովների 14-ական անդամների ընտրութիւնը: Սակայն այդ օր կայացաւ միայն կրօնական ժողովի ընտրութիւնը և ընտրվեցին 14 եկեղեցականներ, որոնց թւում նաև նախկին երեք պատրիարքները—Օրմանեան, Դուրեան և Արշարունի արքեպիսկոպոսները: Որովհետև կրօնական ժողովը ազգային կենտրոնական վարչութեան մասն է կազմում, ուստի Օրմանեան սրբազանի ընտրութիւնը թէև աւելի նուազ քուէներով, քան Դուրեան և Արշարունի սրբազանների ընտրութիւնը, արդէն մի ազդանշան էր, թէ ազգային ժողովի համակրութիւնը դէպի որ կողմն է թեքվում: Դժբաղդաբար, քաղաքական ժողովի ընտրութիւնը այդ օրը չը կայացաւ, որովհետև ժողովը տրամադիր էր ընտրել ոչ թէ համերաշխական վարչութիւն, այսինքն բաղկացած կուսակցութիւնների ներկայացուցիչներից, այլ վարչութիւն՝ բաղկացած բոլորովին չէզոք անձնաւորութիւններից կամ չէզոք տարրերի ներկայացուցիչներից: Ինքը նախկին վարչութեան ատենապետ Ս. Գաբրայեանը, ինչպէս կարդում ենք թերթերի մէջ, բացորոշ կերպով յայտարարել է ժողովին, թէ անհրաժեշտ է կազմել միատարր վարչութիւն:

Ազգային ժողովի յաջորդ նիստը կայանում է մի շաբաթից յետոյ, մարտի 7-ին, այս անգամ ատենապետութեամբ ծերակուտական Գաբրիէլ Նորատունկեանի, որի ատենապետական պաշտօնի վերստին ստանձնումը նոյնպէս ցոյց է տալիս ազգային ժողովի նոր կուրսը—հակադաշնակցական ընթացք բռնելու տրամադրութիւնը: Սակայն այդ նիստում, որին մասնակցում էին 76 երեսփոխաններ, ոչ ոք մեծամասնութիւն չէ ստանում, որովհետև դաշնակցականները նորից արծարծում են այն հարցը, թէ պէտք է ընտրել վարչութեան մէջ կուսակցական ներկայացուցիչներին ևս: Վերջնական ընտրութիւնը պէտք է կայանար երէկ, մարտի 14-ին, և ի նկատի ունենալով երեսփոխանների մեծամասնութեան տրամադրութիւնը, պէտք է յուսալ, որ այս անգամ թիւրքահայերը կունենան մի ազգային կենտրոնական վարչութիւն, որի կազմի մէջ կամ բոլորովին չեն լինի դաշնակցականներ, կամ եթէ լինեն, փոքրամասնութեամբ, այնպէս որ տիրապետող դեր խաղալ չեն կարող:

Անշուշտ, մենք չենք պաշտպանում այն տեսակէտը, թէ ազգային վարչութիւնից պէտք է վտարել քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչներին. ոչ. մենք թոյլատրելի ենք համարում դաշնակցականների ընտրութիւնը ազգային վարչութեան մէջ միայն այն դէպքում, երբ այդ կուսակցութիւնը կը գայ այն համոզման, թէ արժանանալով ազգի կողմից ընտրութեան, նրա ներկայացուցիչները պէտք է նախ պաշտպանեն և ի նկատի ունենան ազգային ընդհանուր շահերը և իրաւունքները և ապա իրանց մասնաւոր, կուսակցական շահերը:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒԼՍՏԵՐԵԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 մարտի

ԼՈՆԴՈՆ.—«Վեստմինստեր-Գազէտը» ասում է. «Կառավարութեանը պայմաններ թելադրող զօրքը սպառնում է ազատութեան ու հասարակական կարգ ու կանոնին»: Լրագիրը պահանջում է, որպէսզի կառավարութիւնը գործէ եռանդով:

Չը նայած յամառ լուրերին, կաբինետը մտադրութիւն չէ ցոյց տալիս հրաժարվելու: Հրաժարական է տուել միայն Սիլին, բայց նրա հրաժարականը մերժվել է Ասկվիտից: Ըստ երևոյթին, պալատում Ասկվիտի տուած բացարձակ, սակայն զսպված բացատրութիւնները ամրացրել են կաբինետի դրութիւնը պարլամենտում:

Զինւորական մինիստրը յայտնել է գեներալներին, որ նրանցից իւրաքանչիւրին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ո՞ՐՆ Է ՌՈՒՍԱԿԱՆ ՖՈՒՏՈՒՐԻԶՄԸ

— Պուշկինը աւելի անհասկանալի է, քան հիերօգլիֆները: Ինչո՞ւ Պուշկինը չէ այրել իր Օնեգինին: Պուշկինը Տրետեակօվսկիից էլ ցած է եղել: Վայր գլորենք Պուշկինին Ներկայի Շոգենաւից...

— Լէօնարդօ դա-Վինչիի, Միքէլ Անջէլօյի և Ռաֆայէլի նման հաւքարային վարպետներին ընդունել իբրև վերածնիչնե՞ր. որքան ծիծաղելի է...

— Թող նզովված լինեն երէկվայ կարապետները. նրանց շոգենաւը արդէն ծակվել է: Իսկ մերը լողում է ծովի վրա, հակառակորդներին ողբերգութեան մէջ ձգելով...

Անցեալը խպառ ոչնչացնող, Դոստոեվսկիին, Պուշկինին, Տօլստոյին գրօշի արժէքից զուրկ համարող, ապագայի տէրն ու տնօրէնը լինելու յաւակնութիւնը ունեցող ռուս ֆուտուրիստները այսօր անօրինակ աղմուկ են հանում մայրաքաղաքներում:

Իրար ետևից հրատարակվում են ֆուտուրիստական գրքեր ու ժողովածուներ, կարդում են «դասախօսութիւններ», աշխատում են ամեն կերպ տարօրինակ երևալ, ձգնում իրանց իւրաքանչիւր հանդէս գալը մի որևէ սկանդալով կամ արտաքոյ կարգի վարմունքով պսակել:

Յայտնի է, որ ֆուտուրիստներից մէկը առանց որևէ շարժառիթի ռուս բանաստեղծ Բալմոնտին ապտակեց՝ «ըմբոստութիւն» կատարած լինելու համար: Մի ուրիշը անցեալները ոսկեղէնների խանութի մեծ պատուհանի թանգագին ապակին ջարդեց, բացատրելով, որ զզվել է ամեն օր միևնոյն միապաղաղ ադամանդների վրա նայելուց և ուզել է ըմբոստանալ նրանց դէմ: Յայտնի է նոյնպէս, որ ֆուտուրիստները իրանց երեկոյթներին կամ «դասախօսութիւններին» հանդէս են գալիս ներկված երեսներով, երբեմն ճակատների վրա այս կամ այն կենդանու պատկերը նկարելով, սովորական զգեստի փոխարէն երբեմն տարօրինակ շորեր հագնելով, ինչպէս օրինակ ֆուտուրիստ Մաեակօվսկին, որ հանդէս էր եկել բացդեղին գոյնի կանացի վերնազգեստ հագած: Մի այլ ֆուտուրիստ՝ յայտնի Կրուչէնիխը կարդացել է երկու «ղեկուցում», որոնք իրանց տարօրինակութեամբ և մանկական բնաւորութեամբ կարող են միայն ծիծաղ շարժել: Բեմ է բարձրանում այդ Կրուչէնիխը, մէջքը ժողովրդին անելով նստում է ծակ աթոռի վրա և թէյ պահանջում: Խմելով թէյը և բաժակում մնացորդը շաղ տալով պատի վրա, դառնում է հասարակութեան և ասում. «Այսպէս թքում եմ ես ստոր ամբոխի վրա», և հեռանում:

Ի՞նչ են ուզում անել կամ ինչպէս են ասում իրանց խօսքը այդ մարդիկ:

Կարելի է արդեօք ռուս ֆուտուրիստներին, որոնք արդէն մի քանի ֆրակցիաների են բաժանվել, ապագայ գեղարուեստի մարգարէներ համարել. կարելի է նրանց մէջ ապագայի տարրեր տեսնել:

Մարդկանց դատում են գլխաւորապէս նրանց գործերով:

Դիմենք նրանց գործերին:

Ռուս ֆուտուրիստները արդէն բաւական գրքեր են լոյս ընծայել և, կարելի է ասել, իրանց խօսքի մեծ մասն ասել են. ասել են այն, որով այժմ հնար կայ նրանց բնորոշելու:

Ռուս ֆուտուրիստների ֆրակցիաներից մէկը՝ Պետերբուրգինը՝ կրում է էգօ-ֆուտուրիզմ անունը, իսկ Մոսկվայինը՝ կուբօ-ֆուտուրիզմ: Առաջինների մէջ նկատելի է սիմվօլիզմից ժառանգութիւն ստացած ծայրայեղ անհատապաշտութիւնը, եսականութիւնը, դէպի «անարգ» ամբոխը ունեցած արհամարհանքը, բառաթխութիւնը, պատկերների մթութիւնը և ծայրայեղ էստետիզմը: Իսկ կուբօ-ֆուտուրիստները, ինչպէս Կրուչէնիխը, Խլէբնիկօվը, Մաեակօվսկին, Բուրլիւկ եղբայրները, Ն. Կուլբինը և այլք, իրանց համարում են «բառաստեղծներ», «անդր-մտային» բանաստեղծներ, որոնց համար «խօսքը» արտայայտվելու միջոց չէ, այլ նպատակ, ուստի և նոր բառ, նոր խօսք ստեղծելը, որքան էլ նա անհասկանալի լինի, նրանց ստեղծագործութեան գլխաւոր օրինակն է:

Նախ աչքի է ընկնում այն հանգամանքը. որ ամեն մի ֆուտուրիստ, որքան էլ նա ապաշնորհ, անտաղանդ լինի, նախ և առաջ իրան հանճար է համարում:

Էգօ-ֆուտուրիստներից ամենաաչքի ընկնող Իգօր Սեվերեանինը գրում է.

Ես Իգօր Սեվերեանին հանճարս
Իմ յաղթութեամբ լիացած եմ...
Ես իմ ձգտումը կատարեցի՝
Գրականութիւնը յաղթեցի...
(«Громокипящій кубокъ»)

Իսկ մի ուրիշը, որ Սեվերեանինի շնորհքի տասերն անգամ չունի՝ նոյն ձևով գրում է.

Райчатся окна Безсмертія,
Солнчиуся генія теремъ.
Люди! въ мой термъ увѣрьтесь!
Вѣримъ въ Олимпова, вѣрим.!
(«Поэзы»)

Եթէ այս կտորի առաջին օրիգինալ երկտողը բառացի թարգմանենք, դուրս կը գայ ֆուտուրիստական հետևեալ աբսուրդը.

Դրախտանում են անմահութեան պատուհանները,
Արևանում է հանճարի ապարանքը:

Այստեղ դրախտանալ և արևանալ բառերը ֆուտուրիստական բառաստեղծութիւն է. երկուսն էլ բայացրած գոյականներ են: Բայց կարևորը դա չէ, այլ այն, որ այս Օլիմպօֆն էլ հանճար է համարում իրան:

Մի ուրիշ՝ ֆուտուրիստ Վասիլիսկ Գնեդօվ՝ գրում է իր մասին.

«Շէկսպիրը և Բայրոնը միասին գրել են 80,000 բառ: Ապագայի ամենահանճարեղ բանաստեղծ Վասիլիսկ Գնեդօվը գրել 80000000001 քառակուսի բառ»:

Ինչպէս տեսնում էք, ֆուտուրիստների այս ինքնավստահութիւնը և մեծամտութիւնը ոչ մի չափ ու սահման չունի: Նրանք իրանց տաղանդներ անգամ համարելու պատիւը ստոր են գտնում. իւրաքանչիւրը պէտք է առնուազն հանճար լինի: Մենք տեսանք, թէ ինչպէս Իգօր Սեվերեանինը, իր կարծիքով, այնքան մեծ «հանճար» է, որ այս երկու-երեք տարվայ ընթացքում Բայազիդից մինչև Կամչատկա ամբողջ «գրականութիւնը յաղթահարել է», «ոչնչացնելով», «մոռացնելով» այն ամենը, ինչ հին է կամ անցեալին է պատկանում, Պուշկիպարտաւորեցնում է, որ որևէ յեղափոխական գործողութիւն նկատելուն պէս օֆիցերները վերաբերմամբ վարվեն զինուորական օրէնքի համաձայն:

Լուրերի համաձայն, հրաժարված Սիլլին առաջարկվելու է այլ պաշտօն կաբինետում:

Կառավարութիւնը յոյս ունի, որ հնարաւոր կը լինի անց կացնել հօմրուլը:

Համայնքների պալատ: Չեմբէրլէնը խօսում է Սիլլի հրաժարականի և պրեմիէրից այդ հրաժարականը չընդունվելու մասին: Չեմբէրլէնը այդ ամենը կօմեդիա է անուանում: Զօրքի հարցը համարում է կարևոր և պահանջում է օպպօզիցիայից՝ քննել, թէ ում է նա ձգտում: 314 ձայնով ընդդէմ 222-ի ընդունվում են պարլամենտից նշանակված գումարները: Ռամզայ Մակդօնալդը յայտնեց, որ եթէ կառավարութեան դրութիւնը այնպիսի էր, ինչպէս բացատրված է կարդացված վաւերագրերի մէջ, կառավարութիւնը չը պէտք է մնար իշխանութեան գլուխ անգամ 24 ժամ: Լիբերալ Գօլդը ասաց, որ լորդերի պալատը սխալվեց, յուսալով թէ օպպօզիցեան կարող է օգտվել զօրքից ինչպէս զէնքից:

Հակառակ առաջին օրերին, Դաունինգ-ստրիտ փողոցը, որ պաշտպանվում է կրկնակի պահակախմբով, համարեա բոլորովին դատարկվել է: Գլխաւոր հետաքրքրութիւնը ուղղված է զինուորական մինիստրութեան մէջ կատարվող խորհրդակցութեան կողմը, որին մասնակցում են ֆելդմարշալ Ֆրէնչ և մի քանի գեներալ: Պարլամենտի կուլուարներում խօսում են, որ Ֆրէնչը և գեներալ Էգուարդը հրաժարական են տուել, և հրաժարականը ընդունվել է կառավարութիւնից:

Համայնքների պալատում Լլօյդ-Ջօրջը յայտնեց, որ հօմրուլի օրինագծի քննութիւնը կը վերսկսվի մարտի 18-ին:

Օպպօզիցիօն խմբակները աշխատում են տապալել տալ կաբինետին: Ասկվիտի դէմ սկսված արշաւանքը ղեկավարում են ֆինանսական աշխարհի ներկայացուցիչները՝ հին գործերի լիդերների հետ միասին:

Ֆրէնչի հրաժարականը դեռ չէ ճշդվում:

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍԻ ԱՆԿՄԱՆ ՏԱՐԵԼԻՑԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

13 մարտի

ՊԱՏԵՐԲՈՒՐԳ.—Ադրիանուպոլսի առման առաջին տարելիցի առիթով բուլգարական գաղութի նախաձեռնութեամբ հոգեհանգիստ կատարվեց հերոս-զօրականների յիշատակին, որոնք ընկան Ադրիանուպոլիսը առնելիս: Այդ տեսակ հոգեհանգիստ տեղի ունեցաւ սերբիական գաղութի ցանկութեամբ Կազանի տաճարում:

ՍՕՖԻԱ.—Ադրիանուպոլսի առման տարեդարձին ամենուրեք Բուլգարիայում կատարվեցին հոգեհանգիստներ Ադրիանուպոլսի վրա գործված յարձակման ժամանակ ընկածների յիշատակին:

Ադրիանուպոլսի առման զոհերի յիշատակին կատարված հոգեհանգստից յետոյ, բազմահազար ամբոխը դիմեց զինուորական ժողովարանի կողմը, տանելով ձեռքերի վրա գեներալ Սավովին և ազգային բանաստեղծ Վազօվին, որ երէկ հրատարակած մի կոչով յորդորում է ժողովրդին մոռացութեան տալ Սավովի՝ սկիզբներում գործած վարմունքները, ի նկատի ունենալով նրա մատուցած ծառայութիւնները:

ԲԵԼԳՐԱԴ.—Ադրիանուպոլիսը վերցնելու տարեդարձին դունայական զօրքի օֆիցերների նախաձեռնութեամբ կատարվեց հոգեհանգիստ ընկած զօրականների համար՝ արքայազնների, ռուսաց և բուլգարական դեսպանների և բոլոր մինիստրների ներկայութեամբ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

13 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Առաւօտը շատ ֆաբրիկաներում և գործարաններում բանւորները դադարեցրին աշխատանքները՝ իբրև բողոք բանւորական մամուլի դէմ բռնութիւններ գործադրելու առիթով: Մայրաքաղաքի 300,000 բանւորից գործադուլ են արել 30,000: Աշխատանքները թողնելիս մի քանի գործարաններում փորձեր եղան ցոյցեր անելու, բայց ոստիկանութիւնը անմիջապէս խափանեց:

Պետական Դումայի մասնաժողովը լսեց ստատս-սեկրետար Գորեմիկինի պաշտօնական գրութիւնը այն մասին, որ մինիստրների խորհրդի նախագահը իր համար հնարաւոր չէ գտնում տալ Դումայում բացատրութիւններ իրան ուղղված հարցապնդումների առիթով, որովհետև, համաձայն Պետական Դումայի կանոնադրութեան 33-րդ յօդուածի, Դուման իրաւունք ունի դիմել հարցապնդումներով միմիայն սենատին ենթակայ հաստատութիւններին և անձերին, իսկ մինիստրների խորհրդի նախագահը, ինչպէս և մինիստրների խորհուրդը անմիջապէս սենատին ենթակայ չեն: Դումայի մասնաժողովը որոշեց այս յայտարարութիւնը ընդունել ի տեղեկութիւն:

Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի նախագահութեամբ գործող մասնաժողովի տեղեկութիւնների համաձայն, Կուբանի շրջանում ուրագանի ժամանակ խեղդվել են ընդամենը 366 մարդ և մօտ 600 գլուխ անասուն: Օգնութիւն ցոյց տալու համար հաստատված են նպաստամատոյց մասնաժողովներ Եյսկում, Տեմրիւկում, Գրիվեննայա և Պրիմորսկի-Ախտարսկի ստանիցաներում: Վերջինում Կարմիր Խաչը բացել է հիւանդանոց: Մինչև այժմ Պետերբուրգի մասնաժողովը ստացել է 316 ր. 40 կոպէկ:

Քաղաքապետը պաշտօնապէս հաղորդում է, որ այսօր աշխատանքները դադարեցրին ընդամենը 46,581 բանւոր: Օրվայ ընթացքում քաղաքի զանազան մասերում գործադուլները փորձեցին խմբեր կազմել և ցոյցեր անել, բայց սկզբից պատրաստված ոստիկանական խմբերը իսկոյն ցրեցին նրանց:

Մինիստրների խորհուրդը ցանկալի գտաւ առևտրի մինիստրութեան նախագիծը մի շարք նաւահանգստի շտեմարաններ հիմնելու մասին: Այդ նպատակով հաստատվելու է առանձին կօմիտէտ առևտրի մինիստրի նախագահութեամբ:

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ.—Ամուրի շրջանի Սէզնօբէլ գիւղում աւազակները յարձակվել են շրջանային վարչութեան վրա և, սպանելով երեք հոգու ու ծանր վիրաւորելով երկուսին, յափշտակել են 10,000 ր.:

ԽԱՐԿՕՎ.—Հանդիսաւորապէս տօնվեց յայտնի պրօֆէսոր, հասարակական գործիչ Գիրշմանի ծննդեան 75-ամեակը: Դուման Գիրշմանին ընտրեց Խարկովի պատուաւոր քաղաքացի:

ԱՍՏՐԱԽԱՆ.—Վախճանվեց Աստրախանի եպիսկոպոս Նիկոդիմը:

ՓԱՐԻԶ.—Ցունական 500 միլիոն ֆրանկի փոխառութիւնից, որից 250 միլիոնը բաց է թողնված Լօնդոնում, Նիւ-Եօրկում, Աթէնքում, 75 միլիոնը ստորագրվելու է Եգիպտոսում, իսկ 175 միլիոնը ֆրանսիական շուկայում:

Ռօշէտի գործի քննիչ մասնաժողովում Կայօյի տուած ցուցմունքը շատ բանում տարբեր էին Բարտուի և Բրիանի ցուցմունքներից: Կայօն պնդում է, որ ոչինչ չը գիտէր Ֆաբրի փաստաթղթի մասին, երբեք թոյլ չէր տալիս խառնել մասնաւոր գործերը հասարակական գործերի հետ, կախումն չունէր վարկային հաստատութիւններից:

Դատախազ Լէկուվէն կտրուկ կերպով յայտնեց, որ Ռօշէտը և նրա գործի շարունակողները անկասկած շահագրգռված էին, որպէսզի Ռօշէտը մնայ ազատ: Լէկուվէն գիտէ, որ Ռօշէտի գործը յետաձգվեց կառավարութեան ճնշման տակ:

Պատգամաւորների պալատը 394 ձայնով ընդդէմ 95-ի ընդունեց այն օրինագիծը, որով միանուագ մօտ 2 միլիարդ ֆրանկ է յատկացվելու պետական ինքնապաշտպանութեան ծախքերի համար:

ՎԵՆԵՏԻԿ.—Երեկոյեան «Հօհէնցօլլէրն» զբօսանաւի վրա կայացաւ ճաշ 40 հոգու ներկայութեամբ: Թագաւոր և կայսրը նստել էին իրար դիմաց: Մնացած ներկայ անձերի թւումն էին մարկիզ Սանջուլիանօն, գերմանական դեսպան Ֆլօտով, շքախումբը, քաղաքային իշխանութիւնները:

Երեկոյեան ժամը 11-ին Թագաւորը մեկնեց Հռօմ:

«Ջիօռնալէ-դ'Իտալիան» ընդգծում է, որ Վենետիկում տեղի ունեցած տեսակցութիւնը կարևոր է երրեակ դաշնակցութեան մասերին կապը աւելի ամրապնդելու համար:

Պաշտօնական մամուլի տեղեկութիւնների համաձայն, գեներալ Պօրրօն հրաժարվեց ընդունել զինուորական մինիստրի պաշտօնը այն պատճառով, որովհետև մերժվեց նրա պահանջը՝ աւելացնելու զօրքերի թիւը և հասցնելու մինչև 325,000-ի, ինչպէս և 600 միլիոն լիր յատկացնելու զինուորական մինիստրութեանը՝ արտակարգ ծախքերի համար:

ՏՐԻՊՕԼԻՍ.—Լիվիական գնդի մի մասը և իտալական մի քանի զօրախմբեր գնդապետ Բիվէրի հրամանատարութեամբ դիմեցին դէպի Տրիպոլիտանի ամենաարևելեան սահմանը՝ Նօֆիլիա վայրը, ուր բնակվում է Խօճարրա ցեղը: Հանդիպելով ապստամբների եռանդուն դիմադրութեան, զօրագնդերը արշաւանք սկսեցին և ջարդեցին նրանց: Ջավիա բերդը իտալացիների ձեռքումն է:

ՎԻԵՆՆԱ.—Ֆրանց-Յովսէփ կայսրը ունկնդրութեան ընդունեց ուկրայնացի պատգամաւոր Լէվիցկիին: Լրագիրների ասելով, երբ կայսրը յայտնել է Լէվիցկիին, որ նա ուկրայնցիների վերաբերութեամբ միշտ ցոյց է տուել հայրական հոգատարութիւն և յոյս ունի, որ Գալիցիայում նոր ընտրողական բարենորոգումը իրագործվելուց յետոյ երկու ժողովուրդների միացեալ կեանքն ու գործունէութիւնը նպաստաւոր կը զարգանայ:

ՊԵԿԻՆ.—Ռուսաց դեսպանը հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ յանձնեց Թագաւոր Կայսրի ձեռագիր նամակը Իւանշիկային՝ պրեզիդենտ ընտրվելու առիթով ուղարկած տեղեկութեանը ի պատասխան:

ՍՕՖԻԱ.—Երէկ Թագուհին արքայազների և արքայադուստրերի հետ մեկնեց արտասահման:

Բուլգարական գործակալութիւնը հաղորդում է, որ Ցունաստանը համաձայնել է լուծել յոյն-բուլգարական վէճը Օկչիլար կայարանի շրջակայքի նկատմամբ բելգիացի օֆիցերի միջնորդութեամբ:

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Առևտրի մինիստրը արգելեց ուղարկել պոստով «Червонная Русь», «Петербургская Газета» և «Голосъ Россіи» լրագիրները:

ԲԵՐԼԻՆ.—Ռէյխստագն ընդունեց, որ մենամարտի համար սահմանվելու է բանտարկութիւն:

Ռումինական գահաժառանգ պրինցը և պրինցեսին իրանց Կարլ որդու հետ մեկնեցին Պետերբուրգ:

ՀՕՆՕԼՈՒԼՈՒ.—«Մամի» շոգենաւի վրա, որ տանում էր պայթուցիկ նիւթեր, կաթսաներից մինը պայթեց: Շոգենաւը ջրասույզ եղաւ. խեղդվեցին 30 նաւաստի:

ՌԻՕ-ԴԷ-ԺԱՆԷՅՐՕ.—Եկաւ պրուսական պրինց Հէնրիխը կնոջ հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Աստրախան, 4 մարտի

Մարտի 2-ին թեմ. դպրոցի դահլիճում կայացաւ ծխականների ժողով, նախագահութեամբ բժ. Յով. Կոզբինցեանի և քարտուղարութեամբ Գէորգ ք. Մկրտումեանի:

Օրակարգի 9 հարցերից՝ ժողովը որոշեց զբաղվել թեմ. դպրոցի հարցով, գլխաւորապէս լսել պատգամաւոր Ռ. Աստուածատրեանի զեկուցումն իր Էջմիածին այցելելու մասին թեմ. դպրոցի հարցի առիթով:

Պատգամաւորը մանրամասն պատմեց իր ճանապարհորդութիւնը Թիֆլիսից մինչև Էջմիածին, իր տեսակցութիւնը «Մշակի», «Հորիզոնի» խմբագրութիւնների և զանազան անձնաւորութիւնների հետ Թիֆլիսում և ապա Նորին Վեհափառութեան հետ Էջմիածնում և աւելի ծանրացաւ այն կէտի վրա, որ Վեհը ուղղեց նրան սինօդ, ուր Հայրապետի կարգադրութեամբ արտակարգ նիստ էր հրաւիրված՝ լսելու Աստրախանի պատգամաւորի զեկուցումը:

Սինօդի կազմը լսելով Աստուածատրեանի զեկուցումը՝ այնուհետև կանգ առաւ գլխաւորապէս երեք հանգամանքի վրա՝ 1) աշակերտների թիւ, 2) կլիմայական պայմաններ և 3) գլխաւորապէս՝ դպրոցի նիւթական միջոցների վրա: Այդ երեք կէտի մասին սինօդի անդամները Աստուածատրեանին առանձին-առանձին հարցեր տալուց յետոյ՝ կանգ առան գլխաւորապէս նիւթական ապահովութեան մասին թէ՝ թեմական դպրոցի պահպանութեան համար Աստրախանը որքա՞ն դրամական միջոց կարող է հայթայթել: Առաջին երկու կէտին վերաբերեալ (աշակերտների թիւը և կլիմայական պայմանները) Աստուածատրեանի տուած բացատրութիւնները լիովին բաւարարեցին սինօդի կազմին, իսկ որովհետև նիւթական միջոցների առանձին աղբիւրներ մատնացոյց անելու լիազօրված չէ եղել, ուստի թողել է՝ Աստրախան վերադառնալով խորհրդակցելու ծխականների հետ և ապա հաղորդելու այդ մասին սինօդին գրաւոր կերպով:

Այդ բացատրութիւններն էլ լսելուց յետոյ, սինօդն առանձնանում է և համարեա կէս-ժամեայ խորհրդակցութիւնից յետոյ՝ իր հետևեալ որոշումն է հաղորդում Աստուածատրեանին. Աստրախան վերադառնալուց յետոյ, ծխ. ժողով հրաւիրել, լսել Աստրախանի հայ հասարակութեան կարծիքը դպրոցը ապահովող դրամական միջոցների մասին և նրանց որոշումն այդ առիթով ներկայացնել սինօդին գրաւոր կերպով:

Աստուածատրեանը Էջմիածնից այն տպաւորութեամբ է հեռացել, որ շահել է նրա տրամադրութիւնը Աստրախանի օգտին, և իր զեկուցումը վերջացրեց ասելով. «Այժմ մնում է, որ Աստրախանի հայ հասարակութիւնը խօսէ, որոշելով իր տալիք գումարի չափը»:

Այնուհետև թեմ. դպրոցի հարցով զբաղվող առանձին յանձնաժողովի նախագահ Գ. ք. Մկրտումեանը կարդաց այն դրամական աղբիւրների ցուցակը, որ կազմել է յիշեալ յանձնաժողովը թեմական դպրոցի տարեկան պահպանութեան համար և որը հետևեալն է.

1) Աստրախանի թեմ. դպրոցին պատկանող 20,000 ր. դրամագլխի %-ը՝ 1000 ր., 2) թեմ. դպրոցի ներկայ շէնքի շահագործումից ստացվող տարեկան արդիւնք՝ 6000 ր., 3) Ֆարաքիս ս. Աստուածածին և ս. Պետրոս-Պօղոս եկեղեցիներից օժանդակութիւն՝ 4000 ր., 4) Աստրախանի մոմավաճառութեան պահեստի հոգաբարձութիւնից՝ 3000 ր., 5) Հայ աղքատների հոգաբարձութիւնից՝ 1500 ր., 6) մուսլ. բարեգործական ընկերութիւնից՝ 1000 ր., 7) օժանդակութիւն Աստրախանի թեմի եկեղեցիներից՝ 3000 ր., ընդամենը 19,500 ռուբլի:

Պէտք է շեշտեմ, որ այդ ցուցակը ամենափոքր չափն է: Դեռ կան թեմ. դպրոցի անունով կտակներ, որ չեն բացվել, շատերն էլ դպրոցի բացվելու դէպքում խոստանում են խոշոր նուիրատուութիւններ: Այդ՝ յանձնաժողովի ներկայացրած դրամական ցուցակի առիթով եղան թեր և դէմ կարծիքներ, որից յետոյ ծխական ժողովը ձայների ճնշող մեծամասնութեամբ անփոփոխ ընդունեց յանձնաժողովի կազմած 19,500 ռուբլու դրամական ցանկը, որի մասին սինօդին տեղեկագրելը յանձնարարվեց պատգամաւոր Ռ. Աստուածատրեանին:

Արտայայտվեցին և այնպիսի կարծիքներ, թէ ինչու Էջմիածինը դպրոցի ծախքերը միայն Աստրախանի վրա է բարձում. քանի որ դպրոցը թեմական է, թեմը ևս պէտք է

նին «Ներկայի Շոգենաւից» վայր գլորելով...

Ֆուտուրիստների ինքնավստահութիւնը յաճախ եսամոլութեան կամ եսապաշտութեան է հասնում, և նրանց արած «գիւտերը» երբեմն կատարեալ զառանցանքի բնաւորութիւն են ստանում:

Օրինակ, Կրուչէնիխը իր «Взорваль» գրքում գրում է.

«ապրիլի 27-ին ժամը 3-ին կէսօրից յետոյ ես մի ակնթարթում կատարեալ կերպով սկսեցի տիրապետել բոլոր լեզուներին: Այդպէս է ժամանակիս բանաստեղծը: զետեղում եմ իմ ոտանաւորները ճապոներէն, սպաներէն և հրէերէն լեզուներով»: Կէտադրութիւնը, ինչպէս տեսնում էք, արհամարհված է:

Վասիլիսկ Գնէդովը ունի մի շարք ոտանաւորներ, որոնց տակ դրել է իր ստորագրութիւնը հետևեալ թւականներով. 1915 թ. Քրիստոսից յետոյ, 2549 թ., 1999 թ., 1980 թ. և 38687 թ. («Небокопы»—«Երկնափորներ»): Ըստ երևոյթին, այդ բանաստեղծի ոտանաւորները այնքան խորիմաստ, այնքան հիասքանչ պիտի լինեն, որ հեռաւոր և ամենահեռաւոր ապագան միայն ընդունակ պիտի լինի ըմբռնելու, հասկանալու «ամենահանճարեղ բանաստեղծ Գնէդովին»...

Նոյն հանճարեղ Գնէդովը յանկարծ սկսում է մալօռուսերէն բանաստեղծութիւններ գրել.

Перша эго-футурня пісня
На украіньский Мові:
Усим набридли Тарас Шевченко
Та погашник Кринівницкій.

Այս դէպքում, ճիշդ է, զարմանալու այնքան բան չը կայ, որովհետև «յանկարծ» ճապոներէն, հրէերէն գրող ռուս ֆուտուրիստը կարող էր աւելի շուտ «յանկարծ» գրել մալօռուսերէն, քանի որ այդ լեզուն յամենայն դէպս նրան ազգակից է, թէպէտ վելիկօռուսի համար անհասկանալի լինելու չափ, ինչպէս մի ղրիմեցի հայի համար Ղարաբաղի բարբառը:

Բայց միթէ վերոյիշեալ ցնդաբանութիւնները, կը հարցնէ ընթերցողը, կարող էին [illegible] բայց ուշադրութիւնը գրաւել, երբ մանաւանդ դրանք յաճախ խուլիգանական ձևով են արտայայտվում: Այստեղ պէտք է յիշեցնենք, որ հետաքրքրութիւն առաջացնողը ոչ թէ ցնդաբանութիւններն են, այլ աւելի շուտ ֆուտուրիստների այն մանիֆեստներն ու կոչերը, որոնց գերագոյն նպատակը նինջ ու մեռելութիւն բերող մօդեռնիստական գրականութեան մէջ թարմութիւն, վերանորոգութիւն և թափ մտցնելն է:

Օրինակ, ֆուտուրիստ Խլէբնիկօվը ռուս գրականութեան մէջ վերջին շրջանում թագաւորող դեկադենտական յոռետեսութեան դէմ այսպէս է գրում. «Ինչո՞ւ ռուսական գիրքն ու ռուսական երգը տարբեր բանակներում են գտնվում: Արդեօք ռուս գրքի և ռուս երգի կռիւը Մահվան և Գարնան միջև եղած կռիւը չէ: Անշահասէր երգիչը փառաբանում է Գարունը, իսկ ռուս գրողը՝ Մահվան աստուածուհուն: Ես չեմ ուզում, որ ռուսական գեղարուեստը ինքնասպանների ամբոխի առաջնորդը հանդիսանայ»:

Հակասական խօսքերի մէջ երբեմն յամենայն դէպս առողջ գծեր կարելի է գտնել ըստ ամենայնի, որոնք թէև ապագայի գեղարուեստի որօրանը դառնալ երբեք չեն կարող, գոնէ ընդունակ կը լինեն երգել իրականութիւնը հասկանալի, մարդկային լեզուով:

Ի՞նչ են անում սակայն ֆուտուրիստները: Նրանք կամենում են նոր լեզու ստեղծել. Նրանք գրում են այնպէս, որ հազիւ թէ գրվածի միտքը կամ իմաստը հասկանալի լինի հենց գրողին: Յաճախ գրում են այնպէս, որ ոչ իմաստ կայ և ոչ խօսք:

Ֆուտուրիստներից շնորհալին՝ Իգօր Սեվերեանինը ունի բանաստեղծութիւններ, որոնց մէջ նա դնում է իր ստեղծած կամ կազմած նոր բառերը:

Офіалчен и олиліен озерзамок
Мирры Лохвицкой.
Лиловѣют разнотонами станы
тонких поэтесс.
(«Поэзоконцерт»)

Եթէ թարգմանենք բառացի, մօտաւորապէս կը ստացվի հետևեալը.

Մանիշակացել և շուշանացել է
Միրրա Լոխվիցկիի լճամրոցը:
Կապտանում են բազմերանգներով
Բանաստեղծուհիների բարակ մէջքերը:

Այստեղ, ինչպէս կը նկատէ ընթերցողը, ֆուտուրիստը գոյականներն ու ածականները բայացրել է և երկու գոյականներ միացրել է (լիճ-ամրոց):

Պէտք է ասել, որ ֆուտուրիստական գրքերը օրիգինալ են գլխաւորապէս լեզուի աղաւաղումներով, որ նրանք «բանաստեղծութիւն» են անուանում: Օրինակ, կազմել են այսպիսի նոր բառեր՝ окалошить—կրկնակօշկացնել կամ կրկնակօշկել», ինչպէս ուզում էք թարգմանեցէք. և որքան վատ, այնքան լաւ. ֆուտուրիզմը դա կը համարի մի նոր բառաստեղծութիւն. беззвучить—[illegible], անձայնացնել. осупружиться—երևի էրիկանալ կամ կնիկանալ. обнездѣшиться—չայստեղանալ. улыбность—ժպտութիւն և այլն և այլն:

Խլէբնիկօվ ֆուտուրիստը ունի մի բանաստեղծութիւն, որի վերտառութիւնն է «Войнасмерть», այսինքն «Պատերազմամահ»: Կուզենայինք նրա մի հատուածը բերել այստեղ, որ բաղկացած է չորս տողից, գաղափար կազմելու համար:

Нѣмотичей и нѣмичей
Зовет взыскующій сущел,
По новым грохотом мечей
Ему отвѣтит будущел.

Խլէբնիկօվը այստեղ կատարեալ «բառաթուխ» է՝ կատարեալ «հացթուխի» նման: Էլ ինչ կայ այստեղ ապագային նուիրված. միթէ այդքան անիմաստ և աղճատված կերպարանք պիտի ունենայ այդ «ապագան»...

Նկատելի է մի հանգամանք ևս, որ Մոսկվայի ֆուտուրիստները շատ են գրաւվում հին սլաւոներէնով. ռուս գրական լեզուի մէջ քաղաքացիութիւն ստացած մի շարք բառեր նրանք փոխարինում են հին սլաւոներէնով:

Օրինակ՝ «Дохлая Луна»—(«Սատկած լուսին») գրքում մենք գտնում ենք հետևեալ նոր բառերը. Թատրոնական դահլիճը Կրուչէնիխը թարգմանել է «созерцогъ», յուշարար—суфлер—«подсказчукъ». Նուագախումբ—оркестр—«звучаре». ապա՝ учимец петроградскаго всеучбища. նշանակում է՝ ուսանող Պետերբուրգի համալսարանի:

Բայց որքան հին սլաւոներէնը ապագայի հետ կապ ունի: Սրանով միթէ ֆուտուրիստները աւելի հեռու չեն գնում. միթէ նրանք իրանց մանիֆեստներն ու բարձրագոչ ժխտումները անցեալի նկատմամբ գրոշի արժէքից էլ չեն զրկում: Դուրս է գալիս, որ նրանց «ապառնին», ֆուտուրը անցեալի մէջ է թաղնված: Ապա ինչո՞ւ այն ժամանակ այրել թանգարաններն ու մատենադարանները. չէ որ հին սլաւոներէնի բառամթերքը հնութեան, վաղ անցեալի ծոցումն է պահված:

Մի ուրիշ ֆուտուրիստ, որ գրում է կանանց ակումբի մասին, յիշում է ճռուողող թռչուններին, լուսնի լոյսով լուսաւորված շէնքը և պարը և այլն, գործածում է այսպիսի լեզու.

В женоклубѣ бальзаколѣтній передунчик эстетно орозил вазы. Птенцы желторотят рощу. В олунѳнном озерзамкѣ лѣсофеи каблучками молоточат паркет.

Ընդգծված բառերը նոր են. եթէ մի քանիսը հայերէնի վերածենք, կը ստացվի այսպիսի անհեթեթութիւն.

Կնակումբ, դեղնաբերանում են, լուսնացած, լճամրոց, մուրճանում են և այլն:

Որքան էլ աղճատված գրեն, յամենայն դէպս վերոյիշեալ կտորների մէջ մենք այս կամ այն հասկացողութիւնն ենք տեսնում: Բայց ծայրայեղ ֆուտուրիզմը հասել է այն կէտին, որ «բառաստեղծութիւնն» անգամ աւելորդ է համարում. նա ժխտում է կուլտուրական լեզուն իր բոլոր ճկունութեամբ ու նրբութիւններով. նա կարծես ուզում է վերադառնալ նախամարդկային այն շրջանին, երբ մարդիկ բացի մի քանի բացականչութիւնից ուրիշ ոչինչ չունէին: Ըստ երևոյթին, գլխաւորապէս այս հանգամանքը ի նկատի ունենալով է, որ Պետերբուրգի էգօ-ֆուտուրիստները իրանց հակառակորդներին այսպիսի մեղադրանք են ուղղել.

«Ապառնիի Մոսկվայի փրկչեան Վաղակատարի փրկչեա է», այսինքն նրանց Futum-ը է Plusquamperfectum.

Օրինակ, յայտնի Կրուչէնիխը այսպիսի երկտող ունի.

Дыр бул щыл
Ха ра ба у

կամ՝

Го оснѣг кайд
М р батульба
Сину ае ксел
Вер тум дах
Гиз

Եւ այս վերջին կտորը ֆուտուրիստները տպագրել են գլխատառերով:

Մի այլ գրուածքում, որ կոչվում է «Ослиный хвостъ» (էշի պոչ), գտնում ենք հետևեալ բաղձալի տողերը.

Сытрп трг ждвр
Смк чпр вчнц

Կամ՝ այսպիսի մի անհեթեթ բան, երևի, «ապագային» միայն հասկանալի.

Ксн
. . . . . ?
. . . . . ?
?

Երևի, այս «բանաստեղծութիւնը» հասկանալի կը լինի մարդուն 39479 թւականի Քրիստոսից յետոյ...

Ինչով են բացատրում այս երևոյթը իրանք ֆուտուրիստները. Կրուչէնիխը ինքը աշխատում է պարզել.

«Միտքը և խօսքը չեն կարող հասնել ոգեւորված մարդու ապրումներին. ուստի բանաստեղծը ազատ է արտայայտվելու ոչ միայն ընդհանուր լեզուով, այլ և իր սեփական լեզուով, որը չունի որոշ նշանակութիւն, ձևաւոր լեզու չէ, այլ անդր-մտային: Ընդհանուր լեզուն կաշկանդում է, ազատ լեզուն հնարաւորութիւն է տալիս լիովին արտայայտվելու»:

Բայց ինչ հարկ կայ արտայայտվելու, հարց տայ նրան մէկը, երբ անհասկանալի պիտի լինի, հետևաբար և «բանաստեղծը» իր բացագանչութիւններով անասունի օրում պիտի լինի: Եւ այն էլ արտայայտվել, երբ ապագայի բանաստեղծ: Ի՞նչ հարկաւոր են նրա բացագանչութիւնները «ապառնին»:

Այդ տեսակէտից միանգամայն հետևողաժամանակ է։ Մինչև անգամ Յով. Սերգէյեանը խնդրեց արձանագրութեան մէջ մտցնել, թէ ինքը զարմանում է, որ դպրոցի բացումից 10 տարի անցնելուց յետոյ սինոդը նոր այսպիսի հարց է զարթեցնում։ Ժողովի վերջը առաջարկվեց իր յանձն առած աշխատանքի համար շնորհակալութիւն յայտնել պատգամաւոր Աստուածատրեանին, որ և ժողովի կողմից ընդունվեց և սրանով ժողովը փակվեց։

Գէորգ Քհ. Մկրտումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Մեր ընթերցողները գիտեն, որ հանգուցեալ տ. Նադիրեանի կտակի մէջ շահ ունեցող Շուլավէրի հայ հասարակութիւնը, որին կտակված է ժառանգութեան բաւական խոշոր մասը, չը կարողանալով ստանալ կտակակատարներից հաշիւ, գանգատ էր ներկայացրել նահանգապետին։ Եւ որովհետև, վերջերս հրատարակված նոր օրէնքով, նահանգապետներին իրաւունք է տրված հսկել կտակակատարների գործադրութեան վրա, ուստի Թիֆլիսի նահանգական ատեանը դիմում է արել նահանգական դատարանին, խնդրելով խնամակալութիւն հաստատել Նադիրեանի գործի վրա։ Դատարանը յարգել է այդ առաջարկը և, ինչպէս մեզ հաղորդում են, խնամակալ է նշանակված պ. Ն. Տիգրանեանը, հոգաբարձու Ներսիսեան դպրոցի, որ նոյնպէս շահ ունի կտակի մէջ։ Հարկաւոր է շուտով ցուցակագրել ամբողջ գոյքը և իմանալ, թէ ինչ է մնացել։ Այդ դէպքը մի լաւ նախընթաց է՝ յարուցանելու նոյնանման պահանջ և ուրիշ մի քանի կտակակատարների վերաբերմամբ, որոնք մինչև այսօր չեն կատարում կտակները և հաշիւ չեն ներկայացնում։

◆ Ամերիկայից Թիֆլիս եկան և երէկ մեկնեցին Էջմիածին երկու հայ երիտասարդներ, պ. պ. Կարապետեան և Սարաֆեան։ Առաջինը Ամերիկայի մի հայ-աւետարանական հովուի զաւակ, որ աւարտել է իր ուսումը Կ. Պոլսի Ռօբերտեան կօլէջում և ապա ստացել համալսարանական կրթութիւն Եէլլի և Կօլումբիայի համալսարանների աստուածաբանական և փիլիսոփայական ճիւղերի մէջ։ Այժմ, յարելով իր մայրենի լուսաւորչական եկեղեցուն, որոշել է դառնալ Էջմիածնի միաբան և, վարդապետ ձեռնադրվելով, գործել իր հայրենիք՝ Հայաստանի ժողովրդի մէջ։ Երկրորդը, պ. Սարաֆեան, աւարտել է ուսումը Այնթապի կօլէջում և գնացել է Ամերիկա յատկապէս մանկավարժութիւն ուսանելու վերոյիշեալ համալսարանների մանկավարժական բաժինների մէջ։ Այժմ մտադիր է գնալ Կիլիկիա և իբրև ուսուցիչ գործել այդտեղ ծրագրված Կիլիկեան ճեմարանի մէջ։ Երկու երիտասարդներն էլ, իրանց գործունէութեան ասպարէզը մտնելուց առաջ, որոշել են մի քանի ամիս անց կացնել Էջմիածնում, հետևելու համար այդտեղ հայոց եկեղեցուն վերաբերեալ ուսումնասիրութիւններին։

◆ Երէկ, Թիֆլիսում, երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց տ. Զարուհի Նազարեան։ Հանգուցեալը Շուշում յայտնի Հախումեան ընտանիքից էր, ամուսնացած Նազարեան Յակոբի հետ, որ դեռ 50-ական և 60-ական թւականներին իր միւս եղբայրների՝ Մատթէոսի, Աւագ, և Ստեփանի հետ, կապեր էին հաստատել Կ. Պոլսի, Վենետիկի հետ, և նրանց տանը կարելի էր գտնել Մխիթարեան վանքերի հրատարակութիւնները, Խրիմեանի «Արծուի Վասպուրականը» և այլ հայկական գրքեր, և դա այն ժամանակ բացառիկ երևոյթ էր Շուշու պէս մի խուլ անկիւնում։ Ահա այդ տան զարդն էր տ. Զարուհին, որ մեծ ժողովրդականութիւն էր վայելում Շուշում Զառի-բաջի անունով և ամուսնու վաղաժամ մահից յետոյ նուիրեց իրան ամբողջովին իր միակ զաւակի (Տիգրան Նազարեանի) կրթութեան և խնամատարութեան։ Հանգուցեալը մեռաւ 80 տարեկան հասակում։

◆ Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարը միջնորդութիւն է յարուցել նահանգապետի առաջ՝ Լեվ Տօլստօյի անուան 4 թոշակաւորներ հաստատելու Թիֆլիսի այգեգործական դպրոցում։ Թոշակաւորները լինելու են բացառապէս Թիֆլիսեցիներ։

◆ Այսօր Հասարակական ակումբում սովորական երեկոյթ չի լինելու, որովհետև Մեծ-Պասի չորրորդ շաբթին ներկայացումներ չեն թոյլատրվում։ Առաջիկայ շաբաթ օրը մի զրոյց կը կայանայ Կովկասում զեմստվային հիմնարկութիւններ մտցնելու մասին։

◆ Մեծ-Պասի վեցերորդ շաբթում Պետերբուրգի Զինւորա-Իրաւաբանական Ակադեմիայի պրոֆ. գնդապետ Վ. Դ. Պլեանեօվը կը դասախօսի Բագու, Թիֆլիս, Ալէքսանդրօպօլ և Երևան քաղաքներում՝ «Հայկական հարցը Թիւրքիայում» նիւթի մասին։ Դասախօսութիւնը շօշափելու է հայկական խնդրի ամբողջ պատմութիւնը մինչև մեր օրերը։

◆ Երէկ քաղ. վարչութեան մէջ առեւտրա-տնտեսական յանձնաժողովը նիստ ունեցաւ, որտեղ քննեց շուկաների վրա կանոնաւոր հսկողութիւն սահմանելու հարցը։

◆ Այսօր երեկոյեան կը կայանայ Կայս. Կովկասեան Բժշկական Ընկ. հերթական նիստը, որտեղ կարդացվելու և հաստատվելու է Ընկ. առաջին նիստի արձանագրութիւնը, տեղի է ունենալու անդամների ընտրութիւն։

◆ Կիրակի օրը, ամսիս 16-ին, ցերեկ. ժամը 10-ին, Ժողովրդական Տանը նշանակված է ժողովրդական համալսարանների ընկ. անդամների ընդհանուր ժողովը՝ վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրելու համար։ Վերջում Կ. Ա. Կօզլով դասախօսութիւն կը կարդայ «Грибоѣдовъ и его время» թեմայով։ Դասախօսութիւնից յետոյ կը լինի երաժշտական բաժին։

◆ Իշխ. Ա. Ա. Բեհբութեան Յովնանեան դպրոցի չքաւոր աշակերտուհիներին օգնող ընկ. նուիրաբերել է 1200 քառ. սաժէն տարածութեամբ մի հողամաս Շղնէթ գիւղում, յիշեալ դպրոցի չքաւոր և թուլակազմ աշակերտուհիների համար ամառանոց շինելու։

◆ Գաւառական մամուլի օրգանները սովորաբար կատարում են արտատպութիւններ Թիֆլիսի հայ թերթերից, այն է «Մշակից» և «Հորիզոնից», սակայն այդ արտատպութիւնների ժամանակ յաճախակի գործադրում են դատապարտելի եղանակ։ Օրինակ «Գաւառի Ձայն» թերթը, երբ նա արտատպութիւն է անում «Հորիզոնից», en toutes lettres յիշում է աղբիւրը, իսկ երբ «Մշակից»՝ աղբիւրը անյայտ է մնում։ Իր № 14-ում, արտատպելով «Հորիզոնից» Էջմիածնից խփած մի հեռագիր, «Գաւառի Ձայնը» պարտք է համարում յայտնել. «Էջմիածնից «Հորիզոնին» յայտնում են հետևեալը»։ Իսկ № 16-ում, արտատպելով «Մշակի» մէջ տպված Նուպար-փաշայի՝ Կաթողիկոսին խփած հեռագիրը ամբողջութեամբ, նոյնիսկ «Մշակի» խմբագրական ծանօթութեամբ, «Գաւառի Ձայնը» մի խօսք անգամ չէ ասում, թէ այդ ամենը վերցրել է «Մշակից»։ Բայց երբեմն նա բարոյախօսութեան դասեր է կարդում ուրիշներին։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խորհրդակցելով Հալաբարի մի խումբ ներկայացուցիչների հետ որոշել է բանալ Հալաբարում Ընկ. ճիւղ։

◆ Մարտի 20-ին Թիֆլիս է գալու ռուս գրականագէտ Ս. Մ. Վասիլեվսկի՝ Թիֆլիսում մի շարք դասախօսութիւններ կարդալու։

◆ Կիրակի օրը, ամսիս 16-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում Գ. Ստամբօլցեանը կը դասախօսի «Ինքնօգնութեան դրամարկղներ» նիւթի մասին։ Դասախօսութեանը կը հետևէ համերգային բաժին։ Սկիզբն է ցերեկ. ժամը 12-ին։ Մուտքի տոմսակները արժեն 5—10 կոպէկ։

◆ Սղնախեցի հանգուցեալ Ղորղանեանի այրին Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին յանձնեց հանգուցեալ ամուսնու կտակած 2000 ր. և իր կողմից էլ 1200 ր., որպէսզի այդ բոլոր գումարը (3200 ր.) յատկացվի Սղնախի ս. Կարապետ եկեղեցու բակում կառուցվող հայոց դպրոցին։

◆ Այսօր, Կայսերական Կովկ. Բժշ. Ընկ. շէնքում, տիկ. Գուրգէնիձէ, ցերեկվայ ժ. 4—5, ռուսերէն լեզւով երեխաների համար կը կարդայ «Жизнь за ласку» գրուածքը։

◆ Վրիպակ.—1) «Մշակի» երէկվայ համարի (№ 56) «Իմ առաջարկը» վերնագրով յօդուածում սպրդել է մի սխալ։ Տպված է՝ «...Մի քանի ժամանակ առաջ «Կովկ. Լրաբեր» կոչված թերթիկը, որի ղեկավարները թէև գործող մեծութեան մէջ...», պէտք է լինի՝ «... թէև գործող մթութեան մէջ...»։ 2) «Մշակի» № 54-ում եղած հեռագիրների մէջ տպված է. «Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ հօֆմէյստէր Պլեվէի տեղ նշանակված է ներքին գործերի մինիստրի օգնականը»։ Պիտի լինի «հօֆմ. Պլեվէ նշանակված է ներքին գործերի մինիստրի օգնական»։

ԿՈՎԿԱՍ

◆ Գօրիսից մեզ գրում են. «Մեզանում կատարեալ գարուն էր. մանուշակը բուսել, այգիներում որոշ ծառեր ծաղկել և խոտերը կանաչին էին տալիս. և ահա մարտի 2-ին սկսեց տեղալ առատ ձիւն, որը հասաւ ¾ և աւելի արշին հաստութեան։ Ներկայ առատ ձիւնը շատ բարերար ազդեցութիւն կունենայ գաւառիս բերքի և պտղաբերութեան նկատմամբ։ Կանաչները շատ լաւ են. որ մասի գիւղացիներից հարցնում ես, բոլորն էլ ուրախալի պատասխաններ են տալիս։ Մարդկանց և անասունների հիւանդութիւն չը կայ»։

◆ Բաթումից հեռագրում են մայրաքաղաքի լրագիրներին, որ այնտեղ է մեկնել Կովկասի փոխարքայի զինւորական մասին օգնական գեներալ Միլեավսկին՝ Թիւրքաց սահմանագլխում տեղի ունեցող զօրահաւաքումների առիթով։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Նախապատրաստում մի ընկերութիւն է կազմակերպվել, որ փորձեր է անելու բուժելու թոքախտը Մաքսիմ Գորկիին բժշկող բժ. Մանուխինի մէթօդով։

◆ Ֆինանսների մինիստր Բարկը հրաւիրել իր մօտ խորհրդակցելու Պետերբուրգի առեւտրական բանկերի ներկայացուցիչներին։ Պարզվեց, որ հիմա չը կայ երկիւղ կրելու բորսային ներկայ դրութիւնից։ Ռուսաստանը ունի ազատ դրամարկղ։ Միջազգային ֆոնդային շուկայի ժամանակաւոր վատթարանալը, որ բաւական չափով կապ ունի Անգլիայի և Ֆրանսիայի վիճակի դէպքերի հետ, զգալի դարձաւ նաև ռուսական բորսայում։ Խորհրդակցութիւնը որոշեց պաշտպանել բորսային գները [illegible] դէմ, և այդ նպատակով որոշվեց գնել [illegible]։ Խորհրդակցութեան հետեւանքը շատ լաւ ազդեցութիւն գործեց բորսային [illegible] վրա։

◆ [illegible] է Բեսսարաբիայի նահանգապետի կարգադրութիւնը՝ [illegible] Պետ. Դումայի որոշումը, որի համաձայն Պուրիշկեւիչի պատիժը [illegible] դումայի նիստերի դահլիճից։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 13-ին, Բէլինսկայա փողոցի վրա ապրող Նիկոլայ [illegible] յայտնեց ոստիկանութեան, որ մի օր առաջ իր [illegible] բացակայութեան ժամանակ գողացել են 117 րուբլի արժողութեամբ զանազան իրեր։ Նա կասկած յայտնեց [illegible] Նատալիա [illegible] վրա, որը և [illegible]։

◆ Նոյնը օրը, Թիֆլիսի նկարչական դպրոցի աշակերտ Արտաւազդ Արծրունի [illegible] Թորոսեանի հետ վէճի բռնկվեց, որի միջոցին Թորոսեանը դանակով ծանր վիրաւորեց Արծրունուն։ Թորոսեանը ձերբակալվեց։

ՄԱՄՈՒԼ

Հայ ժողովրդին յայտնի է Կ. Պոլսի Հայոց Միացեալ Ընկերութեան—որ կոչվում է սովորաբար Միացեալ—կատարած կրթական աշխատանքը Թիւրքահայաստանում։ Կարելի է ասել, որ Միացեալը Թիւրքահայ ժողովրդի լուսաւորութեան մինիստրութիւնն է կազմում։

Դժբաղդաբար, Միացեալը անկարող է համապատասխան կատարել [illegible] իր առաքելական մեծ դերը, նիւթական միջոցների անձկութեան պատճառով։

Ահա ինչ ենք կարդում «Ժամանակ» թերթի մէջ.

Միացեալ Ընկերութեան նիւթական [illegible] այս միջոցիս։

Միացեալ Ընկերութիւնը կը խորհի, [illegible]

[illegible]

Ամենքս կը յիշենք, թէ սահմանադրութեան հռչակման առաջին [illegible] Ընկերութիւնը [illegible] գործի սկսել և հետզհետէ ընդլայնել իր գործունէութեան շրջանակը։

Միացեալը քաջալերուած ընդհանուր համակրանքի այդ արտայայտութենէն և վստահ, թէ [illegible] պիտի ըլլայ, իր նիւթական ոյժերէն վեր ընդարձակում մը տուաւ կրթական ձեռնարկին, [illegible] քան թէ իր նիւթական կարողութիւնը [illegible]

Եւ ահա այսօր Ընկերութիւնը ստիպուած է պահել ու պահպանել 115-էն 120 վարժարաններ, 4000-է աւելի երկսեռ աշակերտներով, որոնց համար այս տարի (1914) 10,500 ոսկի ծախք մը նախահաշուած է. այսինքն՝ նախորդ տարիէն 7—800 ոսկի աւելի։

Արդ, այս անհրաժեշտ գումարին միայն 6500 ոսկին ապահովուած է Եգիպտոսի Բարեգործականին, [illegible] և ամերիկեան գաղութին նուէրներուն շնորհիւ։

Իսկ մնացած 4000 ոսկին։

Այդ գումարը հարկ պիտի ըլլայ [illegible]

[illegible]

Այսպէս ուրեմն 4000 ոսկիի [illegible] Միացեալ Ընկերութիւնը [illegible]

Ահա, [illegible] Միացեալի [illegible]

«Օգնենք Միացեալին [illegible]»

Այս կոչը այսօր մենք ուղղում ենք և ռուսահայ ժողովրդին, մեր հայրենակիցներին, բարեգործներին, ինչպէս և Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդին [illegible] որ [illegible] մեծ գումար է յատկացրել Վանի և Մուշի հայ դպրոցների [illegible] համար։ Մենք կարծում ենք, որ [illegible] արդիւնաւէտ լինել։ Քանի որ Թիւրքահայոց կրթական և դպրոցական գործը [illegible] Միացեալի ձեռքում, [illegible] որ [illegible] գործ դնե Միացեալի միջոցով և նրա [illegible]։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Իշխ. Ալ. Ալ. Բէհբութեանը Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի չքաւոր ա-

---

կան պիտի համարել, «հանճարեղ» Վասիլիսկ Գնէդովին, որ «գրել է» մի պօէմա, որի վերնագիր է դրել՝ «Поэма конца», իսկ բովանդակութիւն չէ գրել. մաքուր թղթի ներքին մասում ստորագրել է, և վերջացաւ գնաց։

Սա, իմ կարծիքով, աւելի հասկանալի է, քան Կրուչէնիխի.

Дыр бул щыл
Ха ра ба у

վայրենի աղաւաղումները։

Ոգեւորված բանաստեղծին շատ դժուար է կանոնաւոր լեզւով գրել, որովհետև վերջինս կաշկանդում է, ուստի ինքնամոռացութեան, սրբազան էկստազի մէջ կարող է դուրս ժայթքել այն, ինչ բնական կերպով կը գայ նրա լեզուին։ Այսպէս են տրամաբանում ֆուտուրիստները։ Եւ դրանցից մէկը, նոյն Կրուչէնիխը, ըստ երևոյթին, «բանաստեղծում» է աղանդաւոր Խլիստի՝ «Շիշկովի ճառը», որը հետևեալն է.

Носоктое лесонтое футр лис натруфунтру натнисинфур кресорефире кресентри фетр уересантро улмири умилисантру».

Սրանով «բանաստեղծը» ուզում է ցոյց տալ խորապէս տանջվող հոգու կրօնական էկստազը։

Մի այլ ֆուտուրիստ, Անտօն Լոտով, իր արևելեան «Քաղաքի մեղեդին» «բանաստեղծութեան» մէջ ձգնում է տալ հայ-վրացական կամ արաբական լեզուների իլլիւզիան և գրում է.

Хан хан да даш
Шу шур и дес
Виларь ягда
Суксан кардекш
Мак са мак са
Яким ден зар
Бакс бар дан як заза
Сю сеч базд и
Гар ё зда бе
Мен хат заиде
Вин да чок ме

Թող հայերը, վրացիներն ու արաբները գան և իրանց լեզուի տարրերը փնտրեն «հանճարեղ» Լոտովի «ապառնի» բանաստեղծութեան մէջ։ Անշուշտ կարող է պատահել, որ չը գտնեն, սակայն յուսահատվելու կարիք չը կայ, քանի որ «ապառնի» հայերին գուցէ վիճակված լինի ապառնիական բանաստեղծի գոհարները գնահատելու...

Ֆուտուրիստները, հարկաւ առաւելապէս պետերբուրգցիք, ամենամեծ տեղը ձևին են յատկացնում. մենք ստորև կը բերենք մի-երկու նմուշ, որոնք խիստ ամփոփ կը բնորոշեն ձևամոլ ֆուտուրիստներին, որոնց այդօրինակ գրուածքները ծաղրանկարի կերպարանք են ստանում։

Խլեբնիկովը գրել է մի փոքրիկ ոտանաւոր «Ծիծաղ» վերնագրով, ուր բոլոր մասն-բառները ծիծաղ արմատը ունեն։

О, разсмѣйтесь, смѣхачи!
О, засмѣйтесь, смѣхачи!
Что смѣются смѣхами,
Что смѣянствують смѣяльно,
О, засмѣйтесь усмѣяльно!
О, разсмѣшищ надсмѣяльныхъ
Смѣх усмѣйных смѣхачей!
О, изсмѣйся разсмѣяльно
Смѣх надсмѣйных смѣячей!

Երկրորդ նմուշը, որ գտնում ենք ֆուտուրիստական «Սատկած լուսին» ժողովածուի մէջ, հետևեալն է և խօսում է «սիրոյ» մասին, վերնագիրն է «Любхо».

«Залюбясь влюбяюсь любима люблѣя в любсвках в любви любенѣющих? любки! любкій! любрами олюбрясь нелюбрями залюбить, полюбить приполюбливать в люблѣніях любеж... և այլն, այսպէս մօտ 60 տող գրքի մեծադիր էջերում։ Որքան ճիգ է հարկաւոր կարդալու համար, բայց հետաքրքրական է՝ որքան ճիգ էր հարկաւոր գրելու համար։

Եւ դեռ կարող են ասել ֆուտուրիստները, որ նրանք ոգեւորութեան վայրկեանին լեզուի կաշկանդիչ կանոններին ենթարկվել չեն կարող։ Բայց որքան կաշկանդվում են նրանք, երբ մտքերի և զգացմունքների հետ պիտի ստեղծեն և բառեր, որոնց այս կամ այն կերպ համաձայնեցնելու համար ահագին ժամանակ պիտի վատնվի։ Եւ միթէ մենք կարող ենք հաւատալ, որ վերոյիշեալ նմուշները կարող են երբևիցէ ոգեւորութեան արդիւնք լինել. ո՛չ. դրանք ազատ ստեղծագործութիւն չեն, այլ արդիւնք մըտքի և զգացմունքի անթոյլատրելի ինքնաբռնաբարութեան։

Մէկը գրել է հետևեալ կտորը և դարձել «հանճարեղ».

Кони, топот, инок,
Но не речь, а черен он,
Идем молод, долом меди,
Чин зван мечем навзничь և այլն։

Կարդացէք աջից ձախ և ձախից աջ, կը ստանաք միևնոյն բառերը։ Բայց ի՞նչ ստեղծագործութիւն է սա։ Շատ տեղին է նկատել քննադատ Չուկովսկին, որ այդ մարդիկ, այսինքն ֆուտուրիստները, «նստած են ինչ-որ մի անտակ ծակի վրա և անըր-մտային բառերի օնանիզմով են պարապում»...

Բաւական համարելով նմուշների այս շարքը, որոնք ըստ ամենայնի կարող են ֆուտուրիստների դէմքը բնորոշել, մենք այժմ կանցնենք մեր ընդհանուր եզրակացութեան։

Անցեալ անգամ յատկապէս շեշտեցինք, որ ներկայ ֆուտուրիզմը, մանաւանդ ռուս ֆուտուրիզմը բնորոշվում է իր «բռունցքի ու ապտակի» սկզբունքով, որ նա ցինիկ վերաբերմունք ունի դէպի կինն ու դեմոկրատիան։ Թող անհիմն չը թւայ մեր եզրակացութիւնը, քանի որ փաստերը համոզիչ են։ Մենք նրանց մանիֆէստների և կոչերի մէջ եղած որոմները բաժանել ենք ցորենից, սակայն ասել ենք այն էլ, որ այդ ցորենն էլ նորութիւն չէ մեզ համար։ Ֆուտուրիստները «թքում են ամբոխի վրա», ֆուտուրիստները «խորը արհամարհանք են զգում դէպի կինը», այդ պատճառով էլ կուբօ-ֆուտուրիստները նոյնիսկ որոշել են այսուհետև չը գործածել ռուս լեզուի մէջ իգական սեռը բնորոշող վերջաւորութիւնները՝ «изъ подлаго презрѣнія къ женщинѣ и дѣтямъ»,—ասում է Կրուչէնիխը։

Դուք գիտէք, որ ամբոխի վրա թքելը և կնոջ ստրկութեան ու ստորացման ջատագովումը՝ «ապագայի» համար նորութիւն չէ. թող ֆուտուրիստները կատարելապէս հանգիստ լինեն և յանուն ապագայի նիզակներ չը ճօճեն կնոջ և ամբոխի դէմ, քանի որ իրանք անցեալում այդպիսի նախորդներ շատ են ունեցել։

«Մենք ուզում ենք փառաբանել ատելութիւնը դէպի կինը»,—ասում է նրանց կոչերից մէկը։ Եւ կին-ֆուտուրիստներից մէկը արձագանք է տալիս այդ կոչին [illegible]

[illegible]

Ֆուտուրիստ Կրուչէնիխը գրում է. «Из-за серы сырость и серость и сирени». [illegible] «семья—от сѣмья—соѣм—совѣт—вмѣстѣ ѣдящіе» [illegible] ётец—едец—ядец—ядящій» [illegible]

[illegible] «И поймут меня всѣ языки земли, вся языки, всѣ яцики—яцы—яца—цяи—цьи—ц! ц! ц!»... [illegible]

Ապագայի գեղարուեստը չը կայ ներկայ ֆուտուրիզմի մէջ, [illegible]

[illegible]

Ամբոխի և դեմոկրատիայի վրա թքելը, [illegible] արդիւնք է։

Նրա «բանաստեղծութիւնը» [illegible] արդիւնք է։

[illegible]

Ներկայ ֆուտուրիզմը [illegible] Մարինետտիի մանիֆէստներից [illegible] («Մանիֆէստ վեննեցիկներին»)։

Ո՛չ Ապագայի գեղարուեստը, ապագայի բանաստեղծութիւնը [illegible]

Ապագայի բանաստեղծութիւնը, արուեստը, [illegible]

Սուրխաթեան

շակերտուհիներին նպաստող Ընկերութեանը նուիրել է Մղնէթ գիւղում 1200 քառ. սաժէն հող, որի վրա Ընկերութիւնը պէտք է ամառանոց շինէ դպրոցի կարօտ ու թուլակազմ աշակերտուհիների համար։

—

Թիֆլիս, 13 մարտի

Յօգուտ Նորաշէնի դպրոցի չքաւոր աշակերտների ճաշարանի տիկ. Մարգարիտ Աբիեանը նուիրել է 25 րուբլի, որի համար յայտնում եմ տիկնոջը շնորհակալութիւն։

Մայրապետ՝ կոյս Թայիրեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Իրլանդիայի ինքնավարութեան, հօմրուլի իրականացման անխուսափելիութիւնը աւելի ու աւելի է յուզում, ալեկոծում Անգլիայի քաղաքական կեանքը։

Քանի աւելի է մօտենում վճռական րոպէն, այնքան աւելի են բորբոքվում կրքերը։ Մի կողմից իրականանալու վրա է իրլանդացիների տասնեակ տարիների դատը, նրանց արդար պահանջը, միւս կողմից պահպանողական կուսակցութեան և օրանժիստների յամառ դիմադրութիւնները։

Օլստերը ի դէմս օրանժիստների յայտարարում է, որ ինքը թոյլ չի տայ իրականացնել հօմրուլի բիլլը։ Օլստերցիները պատրաստել, զինել են 100,000 մարդ ապստամբութիւն բարձրացնելու, հէնց որ Իրլանդիան ինքնավարութիւն ստանայ։ «Կամ արձակեցէք պարլամենտը և նոր ընդհանուր ընտրութիւններ նշանակեցէք, որպէսզի երկիրը արտայայտվի հօմրուլի վերաբերեալ (այն յոյսով, որ նոր ընտրութիւնները կը տան պահպանողականների մեծամասնութիւն) և կամ մենք քաղաքացիական պատերազմ կը յայտարարենք։»—ասում օլստերցիները։

Սկզբից կառավարութիւնը առանձին նշանակութիւն չէր տալիս այդ սպառնալիքներին, բայց երբ օլստերցիները «մանիֆեստ» հրատարակեցին, կոչ անելով քաղաքացիներին ստորագրութեամբ վաւերացնել իրանց պատրաստականութիւնը «նպաստել գործողութիւններին, որպէսզի հօմրուլը օրէնք չը դառնայ». և երբ «մանիֆեստը» ստորագրեցին այնպիսի նշանաւոր քաղաքական գործիչներ, ինչպէս ֆելդմարշալ լորդ Րօբերտս, զառամեալ ադմիրալ Սէյմուր, լօրդ Միլներ, Դայսի, Կիպլինգ և ուրիշները. երբ պարզվեց, որ այդ կոչը արձագանք է գտնում, մի կոչ, որ հրաւիրում է քաղաքացիներին դիմադրել կառավարական զինուորներին, եթէ նրանք զինված ապստամբութեան դէմ ուղարկվեն, կառավարութիւնը սկսեց անհանգստանալ։ Սկզբից կառավարութիւնը կամեցաւ յայտնի զիջողութիւններով, կոմպրոմիսներով, գոհացնել օլստերցիներին։

Պէտք է ասել, որ Իրլանդիայի չորս վիճակներից երեքը, կաթօլիկ ազգաբնակութեամբ, անպայման հօմրուլի կողմնակից են, իսկ չորրորդը՝ Օլստերը, որի ազգաբնակութեան մեծամասնութիւնը բողոքականներ են, հօմրուլի դէմ է, այն էլ ոչ ամբողջովին։

Օլստերը բաժանվում է 9 կոմսութիւնների. որոնցից հինգը նոյնպէս հօմրուլի կողմնակից են, իսկ միւս չորս կոմսութիւնների ազգաբնակութեան մեծամասնութիւնը՝ «օրանժիստները»՝ հօմրուլի դէմ են։ Ահա այդ օրանժիստներն են, որ երդվել են թոյլ չը տալ, որ հօմրուլի բիլլը օրէնք դառնայ։ Կառավարութիւնը ի նկատի առնելով Օլստերում տիրող յուզմունքը,—որը բացատրվում էր նրանով, որ Իրլանդիայի ինքնավարութեան դէպքում՝ կաթօլիկ մեծամասնութիւնը կը ճնշի բողոքականներին—դիմեց կոմպրոմիսների։

Մինիստրների նախագահ Ասկվիտը, հօմրուլի բիլլի երկրորդ ընթերցանութեան ժամանակ, առաջարկեց հետեւեալը.

Երբ հօմրուլի բիլլը օրէնք դառնայ և Դուբլինը ունենայ իր պարլամենտը, այն ժամանակ առաջարկել Օլստերի 9 կոմսութիւններին արտայայտվել, թէ ցանկանում են, արդեօք, ենթարկվել Դուբլինի պարլամենտին, թէ ոչ։ Այն կոմսութիւններին, որոնց ազգաբնակութեան մեծամասնութիւնը դէմ կը լինի, իրաւունք վերապահել, 6 տարվայ ընթացքում, մնալ ընդհանուր պետական պարլամենտի ներգործութեան շրջանում։ Այդ կոմսութիւնները կարող են 6 տարվայ ընթացքում, նոյն հիմունքներով, ինչպէս և այժմ, իրանց պատգամաւորներին ուղարկել ընդհանուր պետական պարլամենտը, իսկ այդ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ միացեալ թագաւորութեան ընտրողների մեծամասնութիւնը կորոշի այդ անջատված կոմսութիւնների վիճակը։

Ահա այն զիջումները, այն կոմպրոմիսը, որ արեց կառավարութիւնը ի դէմս Ասկվիտի, բայց պահպանողական օպպօզիցիային գոհացում չը տուին այդ զիջումները. Նրանք շարունակում են ամեն ջանք գործ դնել՝ յեղափոխութիւն առաջ բերելու համար։

Օլստերի ետեւում կանգնած են Անգլիայի այն ռէակցիոն ոյժերը, որոնք չեն կարողանում ներել լիբերալ կառավարութեանը ոչ նրա 1909 թւի բիւջէն, ոչ էլ «1911 թ. պարլամենտական ակտը», այն ակտը, այն օրէնքը, որը զրկեց վերին պալատը veto-ի իրաւունքից։

Օլստերցիների յամառումը ստիպեց կառավարութեանը մի քանի նախազգուշական միջոցների դիմելու։

Լօնդօնդէրրիի կոմսութեան պահեստի զինուորներին հրամայված է պատրաստ լինել զէնքի կանչվելու. Իրլանդիայի զօրքերի հրամանատար Պէջէտը կարգադրել է գեներալ Գաս-Գրին ստանձնել Օլստերի զօրքերի հրամանատարութիւնը, սակայն Գաս-Գրին հրաժարական է տուել։

Կառավարութեան այդ կարգադրութիւնները առանձին չեն վախեցնում պահպանողականներին, նախ՝ որովհետև նրանք համոզված են, որ կառավարութիւնը չի համարձակվի օլստերցիների դէմ զօրք ուղարկել, և որ բրիտանական զօրքը երբէք չի գնայ իրայինների դէմ։ Եւ, արդարև, հեռագիրը հաղորդում է, որ Իրլանդիայի հեծելազնդի մօտ 100 օֆիցէրներ հրաժարական են տուել, չը կամենալով Օլստերի դէմ գնալ։ Իրերի այդ դրութիւնն անհանգստութիւն է առաջացնում թէ վարչական և թէ պարլամենտական շրջաններում։ Ասկվիտը և զինուորական մինիստր Սիլի տեղեկացնում են համայնքների պալատում, որ զօրքեր Օլստեր ուղարկելու միակ նպատակն է պետական գոյքը պահպանել և օգնել ոստիկանութեանը կարգը պահպանելու մէջ։

Վաղուց, Ստիւարտների ժամանակից, Անգլիայում այդպիսի խռովութիւններ չեն եղած. թէ ինչով կը վերջանան այդ խռովութիւնները, ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Ս. Դ.-Բ.

ԽԱԲԲԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

—

Մեր վարժարաններու վիճակը

Էրզրում, 23 փետրվ.

Այս տարի Էրզրումի ազգ. վարժարաններու վիճակը ծայր աստիճան անմխիթար է. խումբ մը Թայֆայական պարոններ իրենց պարագլուխ ունենալով ազգ. վարժարաններու տեսուչ Րոստոմը և անոր կոյր կամակատար Ց. Աղամալեան՝ մեր վարժարանները կատարեալ անիշխանութեան մատնած են։

Ազգային սահմանադրութիւնը որոշակի ընդգծած ունի ուսումնական խորհուրդներու, տեսուչներու և ուսուցիչ-ուսուցչուհիներու փոխ-յարաբերութեանց սահմանները, բայց ով է սահմանադրութեան նայողը։ Անցեալները՝ տեսչի քայլերը արդարացնելու և վարժարանէն (իբր չէնք չունենալու պատճառով ?!) դուրս մնացած քանի մը տասնեակ աշակերտներու մեղքն ուսումն. խորհրդի վիզը փաթթելու համար գումարած ծնողական ժողովի անուան տակ ոչ-ծնող Թայֆայականներու հաւաքոյթին մէջ երբ պատահմամբ գտնուած ծնողներէն մէկը օրէնք չճանչցող ճառախօսներուն դիտել կուտայ, որ անոնց ըսածներն ու առաջարկները չեն համապատասխաներ ազգ. սահմանադրութեան ոգւոյն և տրամադրութիւններուն, որ անոնք ապօրէն են, քիչ կը մնայ, որ գանակոծման ենթարկուի այդ նոյն ոչ-ծնողներու կողմէ, իսկ ուսուցիչներէն մէկը, որ հակառակ ուսումն. խորհրդի վաւերացման տնօրէնն է (նշանակուած՝ նոյն այդ Թայֆայականներու կողմէ) աղջկանց Հռիփսիմեան վարժարանի, ալ չի կրնար զսպել իր զայրոյթը նման արտայայտութեան դէմ ու իր ամբողջ ոյժով կը պոռայ՝ «ապօրէնութիւնն ալ օրէնք է»։ Խեղճ ծնողը կը լռէ՝ գտնելով ինքզինքը կանգնած բռնի ոյժի մը առջև և հազար երանի տալով Համիդի օրերուն։ Զի որ այն ատեն մէկ Համիդ կար, այսօր պետութեան գլխուն հարիւրաւոր, իսկ ազգին գլխուն հազարաւոր աւելի վատթար Համիդներ կան։

Ասով հանդերձ՝ եթէ գէթ վարժարաններն ապրէին մանկավարժական բնականոն կեանք մը, նորէն գոհ պիտի ըլլայինք և մեր քաշածը յանուն մեր մատաղ սերնդի՝ սիրով պիտի տանէինք, բայց այդ ալ չկայ. չկայ նոյնիսկ 4—5 տարի առաջ եղած քիչ-շատ բարեկարգ վիճակը։

Այսօր մեր վարժարանները Տէր-Թոդիկեան վիճակ մը կապրին. ծեծը խօսքով արգիլուած է, բայց իրականին մէջ գոյութիւն ունի. պատիժներու այնպիսի ձեւեր կը կիրառուին, որոնց մասին 15—20 տարի առաջ անգամ ոչ տեսած և ոչ ալ լսած էինք. կերևի թէ նորագոյն մանկավարժական մէթոդ մըն է, որուն մեր խելքը չի հասնիր։ Անցեալ օրեր աշակերտուհիներէն մէկը քիչ էր մնացեր, որ գոհ երթար այդ մանկավարժական նորագոյն մէթոդին։

Աշակերտուհիները շարունակ կը խօսին, ուսուցչուհին չի կրնար սաստել և ահա կը դիմէ սաստելու և լռեցնելու նորագոյն միջոցի մը. կը կապէ աշակերտուհիին բերանը թաշկինակով ամուր. քիչ յետոյ աշակերտուհիին ուշագնացութիւնը զգացնել կուտայ ուսուցչուհիին իր կիրառած մէթոդի անմտութիւնը... Կը վազեն և ջուր կը բերեն, կը սրսկեն, կը շփեն խեղճ աղջիկը և հազիւ կը յաջողին ուշքի բերել զայն։ Եւ դեռ ուսուցչուհին կը շարունակէ մնալ դըպրոցին մէջ որպէս դասատու։

Իսկ Էրզրումցին այս ամենուն հանդէպ լուռ ականատես է, չի արտայայտուիր, բայց իր մաղձը կը կուտակէ օր մը պայթեցնելու զինքը չարաչար շահագործողներու գլխուն։

Իրազեկ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Չինական ապստամբութիւնը օրէ-օր ստանում է լայն ծաւալ։ Կանոնաւոր զօրքերը դժգոհելով կառավարութիւնից, մասամբ յարվել են ապստամբներին։ Ապստամբներին ղեկավարողը Սունիատսէնն է։

◆ Ալբանիայում դրութիւնը մնում է դարձեալ յուզալի։ Ապստամբական գործողութիւնները Եպիրոսում շարունակվում են։

◆ Այսօր Պետերբուրգ է հասնում ռումինական գահաժառանգը իր ամուսնու և շքախմբի հետ։ Բարձր հիւրը Պետերբուրգում մնալու է ութ օր և շարունակ ապրելու է Ցարսկօյէ-Սէլօյում։

◆ Կ. Պօլսից հեռագրում են. «Իմանալով որ օսմ. հեռագրատան գրասենեակում գտնվում է «Matin» լրագրի թղթակիցը, գերմանացի գեն. ֆօն Սանդերսը և երկու օֆիցէր գնացին այնտեղ և ուղղելով ատրճանակը թղթակցի դէմ՝ պահանջեցին պատասխանել, թէ ով է այն անձը, որ տեղեկութիւն էր հաղորդել Սանդերսի աղջկայ վրա յարձակում գործելու մասին։ Թղթակիցը ապացուցեց, որ նա այդ դէպքին մեղսակից չէ։ Այն ժամանակ Սանդերսը հեռացաւ։ գեներալ Սանդերսի վարմունքը մեծ յուզմունք է առաջ բերել փադիշահի մայրաքաղաքում»։

◆ Սօֆիայից պաշտօնապէս հերքվում է տեղական մամուլում լոյս տեսած այն տեղեկութիւնները, թէ կազմվել է զինուորական լիգա օֆիցէրների մէջ և թէ հնարաւոր է, որ յայտարարվի զինուորական դիկտատուրա։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ ղեկավար շրջաններում սկզբունքով որոշված է խոշոր փոփոխութիւններ կատարել կաբինէտում։ Այսպէս՝ մեծ վէզիր նշանակվելու է Թալէաթ-բէյը, որ ժամանակաւորապէս վարելու է ներքին գործերի մինիստրի պաշտօնը, արդարադատութեան մինիստր՝ ներկայ ոստիկանապետ Բէդրի-բէյը, որի պաշտօնը տրվելու է Ջէմալատ-բէյին, արտաքին գործերի մինիստր՝ կամ Նաբի-բէյը՝ կամ Հակկը-փաշան, ժող. լուսաւորութեան՝ Հուսէին-Ջաւիդ-բէյ և այլն։

◆ Սօֆիայում հիմնվել է ֆրանս-բուլգարական մասնաժողովը, որ Պարիզում գտնվող ֆրանս-բուլգարական կոմիտէտի հետ միասին աշխատելու է յօգուտ երկու երկիրներ կուլտուրական-տնտեսական յարաբերութիւնների զարգացման։

◆ Բեռլինից հեռագրում են, որ Բ. Դուռը կարգադրել է, որպէսզի բոլոր բարձր կրթական հաստատութիւններն աւարտողները ընդունվեն զինուորական ծառայութեան։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դ-ր ԱՆՏՕՆ ՄԷՅԵՐԻ ՋՐԻ ԴԵՂԱՏՈՄՍԸ ԵՐԵՍԻ ԳՈՅՆԻ ՀԱՄԱՐ

Մի տեղեակ կնոջից

Ոչ մի կին իր հասակի մասին չը պիտի հոգս տածէ, քանի նա ջահել տեսք ունի։ Եւ եթէ դուք գիտէք, որ իւրաքանչիւր կին իր երեսի արտաքին գոյնի տակ ունի այլ աւելի թարմ և գեղեցիկ գոյն, այդ դէպքում ոչինչ չէ արգելում կամ խանգարում պահպանել ընդմիշտ արտաքին ջահելութիւնը։ Եթէ երեսի կաշին, հնացած լինելուց կամ այլ պատճառներից, չէ փոխում իր արտաքին կեղեւը և բնականօրէն չէ վերանորոգվում այնպէս, ինչպէս այդ կատարվում է ջահել ժամանակ, այդ դէպքում կարելի է օգնութեան հասնել բնութեանը՝ իր գործունէութեան ասպարէզում։

Այդ միջոցը ներկայումս մեծ աջողութեամբ գործադրվում է ժամանակակից կանանց կողմից։ Գործողութիւնը շատ հասարակ է և ոչ մի դէպքում էլ անդուրեկան չէ։ Հարկաւոր է ձեզ միայն վերցնել մի քիչ լաւ և կիսաթունդ Դէրմօզօն՝ Դ-ր Անտօն Մէյէրի, և մի քանի գիշեր քսել նրան որպէս կօլդ-կրէմ։

Դէրմօզօնը ի չիք է դարձնում երեսի տգեղ, պէպէններով ծածկված արտաքին շերտը և երեան է բերում այդ շերտի տակ թաքնված գեղեցիկ, ճկուն և ջահել կաշին։ Շատ տգեղ կանայք այդ հասարակ միջոցով դարձել են գեղեցիկ և կենսուրախ։

Նոյնպէս կարելի է վարվել նաև ճաքճքված, կոշտ և կարմրած ձեռքերի վերաբերեալ։ Եւ որովհետև այդ միջոցը հասարակ է, էժան և աջողութիւն ունի, դրա համար և հասարակութեան լայն շրջաններում ընդունված է որպէս սիրված դեղ։

Դէրմօզօնի իւրաքանչիւր արկղիկի վրա փակցված է.

«Издѣліе Лабораторіи Доктора Антона Мейеръ». Եթէ Դ-ր Անտօն Մէյէրի անունը կրճատված է կամ խեղաթիւրված, ակնյայտ է, որ կեղծիք է կատարված։

(П. 37187)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ. հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Գաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.: Պոստաւոր գնացքը № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Գաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.: Մարդատար գնացքը № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.: Հաջի-Գաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Գաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ.—Պոստաւոր գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: Մարդատար գնացքը № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.: Մարդատար գնացքը № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.: Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պոստաւոր գնացքը № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.: Մարդ.-ապրանքատար գնացքը № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.: Մարդատար-ապրանքատար գնացքը № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.:

ԲՕՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.: Մարդատար № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 5—9 ժ. 35 ր. եր. Պոստաւոր գնացքը № 3—9 ժ. 1 ր. առ.: Մարդատար գնացքը № 7—3 ժ. 53 ր. ցեր.: Խառն գնացքը № 107—2 ժ. 12 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—Պոստաւոր գնացքը № 4—9 ժ. 16 ր. երեկ.: Մարդատար գնացքը № 8—5 ժ. 54 ր. ցեր.: Մարդատար գնացքը № 10—8 ժ. 40 ր. առ.: Խառն գնացքը № 106—3 ժ. 38 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պոստաւոր գնացքը № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.: Մարդ.-ապրանքատար գնացքը № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.: Մարդ.-ապրանքատար գնացքը № 16/15—7 ժ. 28 ր. առ.:

ԲՕՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 17/18—11 ժ. 7 ր. եր.: Մարդատար գնացքը № 19/20—7 ժ 38 ր. առ.:

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրօթէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—26

◆ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ◆
ՏՆԵՐ
Նիկօլայեւսկայա, Չերքէզօվսկայա և Պեսկօվսկայա փողոցների վրա, Դիղուբէում, Մետեխի զառիվայրի վրա մի խանութ, և մի ամարանոց Կօջօրում։ Տեղեկանալ Գօլովին. պր. «Օրիանտ» հիւրանոցում, № 18, առ. ժամը 10—2-ը և երեկ. ժամը 4—6-ը։
222. 5—4

ՀՐԱՒԷՐ
Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ՝ կիրակի, ամսիս 16-ին, առաւօտեան ժամը 12-ին, ս. Մինաս եկեղեցում նշանակված է ծխականների երկրորդ և վերջին ժողով՝ նոյն եկեղեցու երկրորդ քահանայացուի նոր ընտրութիւն կատարելու. ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու բոլոր չափահաս ծխականներին ներկայ լինելու ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ՝ Ղեւոնդ ք. Մամիկոնեան
233. 2—1



Փականս-Մեխանիկակ
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ՉԱՅՐՎՈՂ
ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
=ՎԵՐՆԵՐ ՊՖԷՅԼ=
Վօկզալնայա փ. № 3.
(օ.մ.) 100. 100—15

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ
հետեւեալ աշխատասիրութիւնները «Գուտենբերգ գրախանութի հրատարակութեամբ.
1) «Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրօֆեսիօնալ խմբաւորումը եւ հասարակական շերտաւորումը» (ստատիստիկական-տնտեսական ուսումնասիրութիւն), ներքին գործերի մինիստրութեան կենտր. կոմիտէտի աւագ խմբագիր Ս. Պատկանովի յառաջաբանով։ Գինը 75 կոպ., եր. 208.
2) «Экономическія и общественныя основы армяно-грузинскаго антагонизма» (критическій анализъ). Գինը 40 կ., եր. 96.
Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներին։ (օ.մ.) 213. 5—3

ՀՐԱՒԷՐ
Թիֆլիսի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցու ծխ. հոգաբարձութիւնը յայտնում է ի գիտութիւն ծխականների, որ կիրակի օրը, մարտի 16-ին, կէսօրվայ ժամը 12-ին կայանալու է ծխական ժողով։
Օրակարգի խնդիրներն են.
1) Զեկուցում և հաշւետուութիւն հոգաբարձութեան 1912/13 թ. և 1913/14 թ. համար։
2) Զեկուցում վերստուգիչ յանձնաժողովի 1911 թ.։
3) Նախահաշիւ 1914/15 ուս. տարվայ։
4) Ընտրութիւն երէցփոխի և մէկ հոգաբարձուի։
5) Ընթացիկ հարցեր։
Առաջին ժողովը չը կայանալու դէպքում երկրորդ ժողովը, որ լինելու է մարտի 23-ին, կը համարվի օրինական։
Հոգաբարձութիւն
229. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՈՍԿԻ ԲԱՐԵԿԱՄ
ՀԱՅ ԸՆՏԱՆԵԱՑ
Չորրորդ տպագրութիւնը՝ էջ 1414. պատկերներ 334. բովանդակութիւնը հարստացրած է աստղաբաշխական, բազմակերպ գուշակողական, երկրագործական, աննիւթական, երազագիտական, հիպնօտիսմական, տոմարական, փիլիսոփայական, աստուածաբանական, պատմական, ժամանակագրական, տեղեկագրական, բարեկարգչական, իմաստասիրական, ղուրանական, մեղուաբուծական, շերամապահական, տարրաբանական, հանքաբանական, արհեստաբանական, առողջապահական, բժշկական, անասնաբուժական, մեկնաբանական, զուարճախօսական հետաքրքրական, զինուորագրական, ժառանգական, աշխարհագրական, ծննդաբերական և այլ և այլ բազմաթիւ և ընտիր, և շատ պէտքական նիւթերով, այլ և վիճակարկութեան, աղթարքի եւ ռամ ձգելու գիտութիւններով և էսպերանտոյի քերականութեամբ։
ԳԻՆԸ 5 ՌՈՒԲԼԻ
Ծանրապահածախսով 6 րուբլի, գիրքս միմիայն գումարով գնողներին, չէ ուղարկվում վերադիր վճարողներին։
Հասցէն Թիֆլիս, Գրիգոր աւ. քահանայ Մանդակունի։ (1,15) 180. 8—2

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, ամսիս 16-ին, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, նշանակված է Զգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցում ծխական ընդհանուր ժողով։ Այս ժողովը՝ երկրորդը լինելով՝ կը կայանայ, որքան որ ծխականներ ներկայ լինեն. ուստի հոգաբարձութիւնը խնդրում է ծխականներին գէթ այժմ շնորհ բերել այդ ժողովին։
Օրակարգի խնդիրներն են՝ 1) Եկեղեցու վերանորոգութիւն. 2) Գանձանակի վերացումն. 3) Վերստուգիչ յանձնաժող-ի 2 անդամի ընտրութիւն։
Հոգաբարձութիւն
234. 2—1

Ղարաբաղի թեմի հայոց եկեղ. ծխ. դպրոցների համար
Հարկաւոր են
ԵՐԿՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՏԵՍՈՒՉ
իւրաքանչիւրը տարեկան մի հազար երկու հարիւր (1200) րուբլի ռոճիկով։ Ցանկացողները կարող են դիմել՝ Шуша, Архимандриту Завэну. Պէտք է խնդրի հետ ներկայացնել ուսման ցենզը և պաշտօնավարութեան ցուցակը։
Ղարաբաղի թեմի ժամ. կառավարիչ՝
ԶԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ
(օ. մ.) 223. 5—2

Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան Վարչութիւնը սրանով յայտարարում է, որ ամեն ուրբաթ օր, ցեր. ժամը 1-ին Ընկերութեան սեփական շէնքում (Պուշկինեան փող. վրա) տեղի կունենայ ԱՃՈՒՐԴ, ազատ գներով, Ընկերութեան վրա մնացած հետեւեալ տների վերաբերմամբ.
1) Արտէմ, Վարդան և Գրիգոր ՎԱՐԴԱՆԵԱՆՆԵՐԻ նախկին տունը, 5-րդ քաղաքամասում, Գեօրգիէվսկայա հրապարակի և Արղութինսկայա փողոցի վրա։
2) Աւետիք ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆԻ նախկին տունը, 7-րդ քաղաքամասում, Վիննի զառիվայրի վրա։
3) Աննա ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ նախկին տունը, 5-րդ քաղաքամասում, Վիննի զառիվայրի վրա։
4) Նինա և Մարիամ ՄԱՐԿՈՍԵԱՆՆԵՐԻ նախկին տունը, 6-րդ քաղաքամասում, Մնացականօվսկայա փող. վրա։
Բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները աճուրդի պայմաններին վերաբերեալ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր Ընկերութեան Վարչութեան դիւանատանը։
(օ. մ.) 218. 3—3

ՆՐԱՆՑ, ՈՐՈՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՅԱՐՄԱՐ ԵՒ ԷԺԱՆ ԳՆԱԼ
ԱՄԵՐԻԿԱ,
խորհուրդ ենք տալիս գնալ ՀԱՄԲՈՒՐԳ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԾԻ շոգենաւերով։ Իւրաքանչիւր անձն, ով դիմում է մեզ, ձրիաբար ստանում է մանրամասն տեղեկութիւններ գլխաւոր գործակալութիւնից՝ С. Вольффъ мл. ГАМБУРГЪ, Германія. S. Wolff jr.
HAMBURG. Glockengiesserwall 13.
P. S. Խնդրում ենք գրել մեզ ռուսերէն։
(Հ. Շ.) 106. 25—11

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный